4583

I

1898

491·99-8
S-46

2010

1898. № 365.

882

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

266

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Տ Ь 2002

Քանեւերրորդ տիպ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԵՒ ԴՐՉԱԳԻՐ ԱՅԲՈՒԲԵՆՈՎ.

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի
Միքայէլեան փողոց, տուն № 81.
1898

491.99-8
Տ-46

Carm
Г178
491.998
S-46
1178.

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Քանեւերորդ տիպ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԵՒ ԳՐՉԱԳԻՐ ԱՅԲՈՒԲԵՆՈՎ

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի
Միքայէլեան փողոց, տուն № 81.
1898

Доз. цензурою, Тифлисъ, 18 Февраля, 1898 года.

49818-ա
ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ԱՄ. Ա. Մասհայեան
ՄՍՍՄՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
36373-66

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՏԱՍՆԵՄԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

«Մայրենի Լեզու»-ի Առաջին Տարին տասնեմիններորդ անգամ տպագրութեան ենք տալիս։

Այս անգամ գրքիս մէջ, նախընթաց տպագրութիւնների համեմատութեամբ, հետևեալ փոփոխութիւններն ենք մտցրել.

1. Գրքի այբբենական մասը նորից ենք խմբագրել։ Այս խմբագրութիւնն անելով, աշխատել ենք՝

Ա. Որ բոլոր օրինակելի բառերը բարոյախօսութեան նիւթը կազմող առարկաներից առնուած լինին.

Բ. Որ տառագիտութեան ժամանակ նման հնչիւնները, որքան հնարաւոր է, յաջորդաբար համեմատուին միմեանց հետ.

Գ. Որ գրագիտութեան սկզբում, երբ մանուկները գործ ունին հնչիւնների նշանագրերը սովորելու հետ, կարդալու համար առաջարկուած բառերը, որքան հնարաւոր է, պարզ լինին թէ հնչական կազմութեան և թէ նշանակութեան կողմանէ։

2. Գրքի մէջ աւելացրել ենք բազմաթիւ նոր պատկերներ և հին պատկերներից մի քանիսը փոփոխել ենք.

3. Այբբենական մասի վերջում դրել ենք գրութեան օրինակներ— չորս երես։ Առաջին երկու երեսները կազմուած են այն բառերից, որոնք այբբենական տպագիր մասի մէջ առաջարկուած են որպէս նիւթ վերլուծութեան։ Այսպիսով ուսուցչի կամքից ու հմտութիւնից է կախուած կարդալն ու գրելը զուգակից անել միմեանց։ Եւ որովհետև գեղեցիկ ու վայելուչ գրելու համար հարկաւոր է երկարատև վարժութիւն, ուստի անմիջապէս վերլուծանելի բառերից յետոյ դրել ենք գրաւոր այբուբենը և մի քանի թեթև վարժութիւններ անջատ գրութեան համար։ Վայելչագրութեան դասերը պիտի շարունակուին և՛ երկրորդ ու երրորդ տարիները, եթէ կարելի է, լեզուի դասերին կից, ուրիշ խօսքով՝ ամենայն բան, ինչ որ գրում է աշակերտը, պէտք է գրէ վայելուչ կերպով և, աշակերտի գրաւոր աշխատութիւնները գնահատելիս, ուսուցիչը անխափան պիտի նշանակէ և՛ գրութեան վայելչութեան չափը գնահատող թուանշան։

4. Բարոյակրթական առակները, որոնցից առնում ենք վերլուծանելի բառերը, մինչև այժմ ցրուած էին գրքի զանազան երեսնե-

բում. այս անգամ մենք նրանց զետեղել ենք գրքի այբբենական մասից յետոյ։ Այդ առակները, որոնց բովանդակութիւնը լիուլի յայտնի է մանուկներին, կարող են և պէտք է սկզբնական ընթերցանութեան նիւթ լինին մանուկների համար «Այբբենարանից» յետոյ։

—Սոքա են այբբենական մասի համար առաջարկուած բարոյակրթական առակները և նրանցից առնուած օրինակելի բառերը վերլուծութեան համար։ Ա. Ագահ շուն. Բ. Շունը և Էշը. Գ. Սագը և Բադը. Դ. Հաւը և Ձագերը. Ե. Մուկն ու Կատուն. Զ. Կաղնի Ծառն ու Եղէգը. Է. Ոգնին և Օձը. Ը. Ոչխարն ու Գայլը. Թ. Կաթնատու Կով. Ժ. Փիղը և Քոթոթը։—Անհաւասիկ և օրինակելի բառերը այն կարգով, ինչպէս նոքա առաջ են բերուած գրքի մէջ։

Ա. շուն—շ, ու, ն.	Դ. հաւ—հ, ւ.	Է. ոգնի—ո, գ.
միս—մ, ի, ս.	ձագ—ձ.	օձ—օ.
ջուր—ջ, ր.	ցին—ց.	
		Ը. ոչխար—շ, խ.
		պանիր—պ.
Բ. սագ—ա, գ.	Ե. մուկը—կ.	կաթ—թ.
բադ—բ, դ.	կատու—տ.	
լիճ—լ, ճ.		Թ. կով—վ, ւ (իւ).
	Զ. կաղնի—ղ.	Ժ. փիղ—ֆիլ—փ, ֆ.
Գ. շունը—ը.	ծառ—ռ.	քոթոթ—ք.
էշը—է.	եղէգ—ե.	ժանիք—ժ.

Վերջին դասը (յոպոպ) կազմում է յ տառը և նրա այլ և այլ գործածութիւնը բառի մէջը և վերջը։ Ապա գալիս են մի քանի վարժութիւններ ու, եւ, եա վանկերով և գրքի այբբենական մասը վերջանում է։

Ուսուցչին մեր եղանակի առանձնութիւններին ծանօթացնելու համար՝ առաջ ենք բերում մի դաս իւր բոլոր մանրամասնութիւններով։

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ—շուն։

1. Բարոյախօսական մասը՝

Ուսուցիչը պատմում եւ պատմել է տալիս «Ագահ շուն» վերնագրով բարոյախօսական առակը (Այբբենական մասի առաջին ւոդուածը)։

2. Իրազննական մասը՝

Զրուցատրական ձեւով եւ հարցմունքների միջնորդութեամբ ծանօթացնում է շանը—առարկային։

Զրուցատրութեան արդիւնքը պէտք է մօտաւորապէս հետեւեալը լինի։

«Շունն ապրում է տանը. նա ուտում է հաց և կաթ, բայց աւելի սիրում է միս. նա ընտանի մսակեր կենդանի է։ Շան մարմինը կազմուած է չորս մասից՝ գլուխ, պարանոց, բուն, ոտներ։ Շան գլխի վրայ մենք տեսնում ենք՝ բերան, քիթ, աչքեր և ականջներ։ Շան գլուխը միացած է բնի հետ պարանոցով. նրա բունը կլոր է. բնի յետեւը նա ունի երկար պոչ։ Շան ստորին մասերը կոչւում են ոտներ. նա ունի չորս ոտ. իւրաքանչիւր ոտը բաղկացած է երեք մասից՝ ազդր, ոլոգ և թաթ. ամեն մի թաթի վրայ չորս-չորս մատներ ունի, որոնք զինուած են սուր-սուր եղունգներով—ճանկերով։ Ոտներին նայելով՝ շունը չորքոտանի կենդանի է կոչւում. Իր սուր ժանիքներով շունը կծում է մարդկանց. դրա համար նրանից վախենում ենք։ Շունը իւրաքանչիւր ծնօտի վրայ երկու ժանիք ունի։

3. *Կարդալու վարժութիւն, որ ունի չորս ստորաստիճաններ.*

Ա. *Վերլուծութիւն բառի.*

Ուսուցիչը վերլուծում է առարկայի անունը—շուն։

Մենք նախընթաց դասի մէջ զննեցինք շունը իբրև առարկայ, իսկ այժմ կը քննենք նրա անունը—շուն—իբրև բառ։ Իբրև առարկայ զննելու միջոցին, մենք նայեցինք շան վրայ, մենք դիտեցինք նրան աչքերով. ուրեմն զննութիւնը կատարեցինք տեսանելիքի միջնորդութեամբ։ Իսկ այժմ շունը չկայ այլևս, մենք կամենում ենք խօսել նրա անուան—շուն բառի վրայ։ Արդեօք առարկայի անունը նոյնպէս կարելի է զննել տեսողութեան միջնորդութեամբ։—Ո՛չ։ Ուրեմն ինչպէս կամ ինչի միջնորդութեամբ զննենք շուն բառը։

—Ա՛յ ինչպէս։ Երբ մենք զննեցինք շանը իրան, նա մեր աչքի առաջն էր, մենք նրան տեսնում էինք աչքով, իսկ այժմ շան հետ էլ մենք գործ չունինք. այժմ միայն պէտք է իմանանք, թէ ինչպէս է շինուած այդ առարկայի անունը՝ շուն բառը, իսկ այդ իմանալու համար պէտք է լաւ լսենք.—շ շ շ ու ու ն (կրկնում է մի քանի անգամ)։ Դէ՛հ, ականջներդ լաւ սրեցէ՛ք և ինչ որ կ՚ասեմ, լաւ լսեցէ՛ք.—շ՚ շ՚ շ՚ (կպցնում է հնչիւնը միմեանց առանց ը տառի օգնութեան և արտա-

սանում է նրան ատամների արանքից). բոլոր բառն ասացի։ Պետրոս, ասա միևնոյն հնչիւնը։ Սարգիս, դու ասա։ Արամ—դու... Ասացէք ամենքդ խմբովին։ Այժմ լաւ լսեցէք. կարող եմ բաց բերանով և պարզ ու երկար ձայնով արտասանել այդ հնչիւնը։ Փորձենք (փորձել է տալիս)։ Ուրեմն շ խուլ ձայն է. նա դժուար է ասւում։

Լաւ լսեցէք այժմ։

շ ո՛ւ ո՛ւ ո՛ւ։ Այժմ բոլոր բառն ասացի։—Ոչ. կէսը, միայն երկու մասը, երկու հնչիւնը։ Այժմ դու ասա, Հայկ. դու, Կարապետ. ամենքդ միասին ասացէք։ Վարդան, ասա առաջին հնչիւնը. Արամ, ասա երկրորդը. Մկրտիչ, կրկնիր երկուսն էլ, ձգիր մինը միւսի յետևից. այժմ կարճ ասա։ Լաւ, հիմա լսեցէք. դուք տեսնում էք, որ երկու հնչիւնը կարելի է ձգած ասել—շշշ ու ու ու և կարելի է կարճ ասել—շու։ —Այժմ դու, Յովհաննէս, ձգիր հնչիւնները միմեանց յետևից, ասա նրանց կարճ, կպցրած։—Մինաս, ասա միայն առաջին հնչիւնը։ Մկրտիչ, դու երկրորդն ասա։ Յոլակ, ասա երկրորդը, յետոյ առաջինը. ձգիր, կպցրու։ Ասացէք միասին երկրորդ հնչիւնը, ապա առաջինը. ձգեցէք. այժմ կարճացրէք. ի՞նչ ստացանք (ուշ)։ Ի՞նչ է նշանակում ուշ։ Այժմ լսեցէք նորից՝ շունն։ Հիմա բոլոր բառը ձգեցի, թէ էլի բան մնաց։ —Բոլորը։—Ուրեմն քանի ձայն կայ շուն բառում։ Ասա, Արամ, առաջինը. դու, Կարապետ, երկրորդն ասա. ձգիր, այժմ կպցրու։ Մինաս, ասա երրորդը՝ երկրորդը, առաջինը։ Հայկ, ձգիր Մինասի ասած բոլոր հնչիւնները երկար. կրկնեցէք ամենքդ. այժմ կարճացրէք. ի՞նչ ստացանք, Գարեգին։—(նուշ)։ Ի՞նչ է նշանակում նուշ։

Զրուցատրութեան հետեւանքը լինում է այն, որ աշակերտները որոշում են եւ վերլուծում հնչիւնները շուն, ուշ, նուշ բառերում։

բ. Հնչիւնների համեմատութիւնը։

Այժմ քննենք ամեն մի հնչիւնը առանձին։

—Քանի՞ հնչիւն կայ շուն բառի մէջ։ Ո՞րն է առաջինը, ո՞րն է երկրորդը, երրորդը։—Այդ հնչիւններից ո՞րն է աւելի պարզ ասւում, իսկ ո՞րն է խուլ ասւում։

—Լաւ. ուրեմն ու պարզ է ասւում, նրան կարող ենք *հեշտութիւնով* ձգել—արտասանել, նա որոշ ձայն ունի, իսկ շ և Ն խուլ ձայն են հանում, նրանց հեշտութիւնով ձգել, պարզ ու բարձր արտասանել չենք կարող. նրանք դժուար են ասւում, կ'ասես թէ խեղդւում են ատամներիդ արանքում։

Ուրեմն այդ հնչիւններից մէկին մենք կ'անուանենք ձայն ունեցող —ձայնաւոր, իսկ միւսներին կ'անուանենք ձայն չ'ունեցող—բաղաձայն։—Ո՞րին կ'անուանենք ձայնաւոր հնչիւն։ Գարեգին. իսկ ո՞րոնց ենք ասում բաղաձայն հնչիւններ, Հայկ։ Ասացէք ամենքդ ձայնաւոր հնչիւնը. այժմ առաջին բաղաձայն հնչիւնը.—այժմ վերջինը։ (Ուսուցիչը պէտք է աշխատէ, որ շ և Ն հնչիւնները արտասանելիս, ը ձայնը չ'կպցնեն նրանցից, այլ արտասանեն ատամների մէջ. Ն հնչիւնը պէտք է արտասանել երկու ը-ի մէջ, միայն առանց ը-երի ձայնը զգալի կացուցանելու. միևնոյնը պէտք է իմանալ և միւս բաղաձայների մասին այսուհետև)։

գ. Ծանօթ հնչիւնը անծանօթ բառերի մէջ.

«Այժմ լսեցէք, տղայք, թէ ինչ բառ կ'ասեմ ձեզ.—ձուկ։ Ի՞նչ բառ ասացի, Կարապետ։ Կրկնիր, Մկրտիչ...—այժմ մտածեցէք, թէ այս բառի մէջ չկայ արդեօք ձեզ ծանօթ հնչիւններից. ո՞րն է, Յովհաննէս։ Իսկ *կուտ* բառի մէջ ի՞նչ ծանօթ հնչիւն կայ։ Ի՞նչ ծանօթ հնչիւն կայ *էշ* բառի մէջ. իսկ *տուն, սան, նոր* բառերում։

—Ո՞վ կարող է իրանից այնպիսի բառ ասել, որի մէջ լինի ու հնչիւնը։ Ասա, Հայկ. դու ասա մի ուրիշը Գարեգին։ Մտածեցէք այնպիսի բառ, որի մէջ լինի շ հնչիւնը... Այժմ այնպիսի բառ գտէք, որի մէջ լինի Ն հնչիւնը...

—Լաւ, հիմա կրկնենք բոլորը. քանի՞ հնչիւն գիտենք մենք. ի՞նչպէս անուանեցինք ու հնչիւնը. ի՞նչպէս ենք անուանում շ և Ն. ինչի՞ ենք այդպէս անուանում։ Ի՞նչ կ'ստանանք, եթէ ձգենք շ և ու, իսկ եթէ կպցնենք։ Ինչ կ'ստանանք, եթէ ձգենք Ն, ու, շ. իսկ երբ կպցնենք. ի՞նչ է նշանակում նուշ։ Քանի՞ բառ կարող ենք կազմել շ, ու, Ն հնչիւններից (երեք—ուշ, շուն, նուշ—ուշ ու նուշ)։

դ. Գրելու վարժութիւն.

Աշակերտները գրում են այն վարժութիւնները և ապա, աստիճան առ աստիճան, նաև այն տառերը, որոնք առաջ են բերուած «գրչագիր» մասի մէջ իւրաքանչիւր բառի համար։

Միևնոյն բարոյախօսական առակից վերցրած երկրորդ և երրորդ բառը՝ «միս» և «ջուր» պէտք է վերլուծել նոյն ձևով, ինչպէս «շուն», բայց աւելի համառօտ ու ամփոփ, որովհետև վերլուծութեան գաղտնիքը առաջին դասից արդէն յայտնի է մանուկներին։

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄԵԱԿ

Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

I.



շուն—ու, շ, ն.

ու, ուշ, ուն, նու, նուշ, շուն.
ուշ ու նուշ. շուն ու նուշ.

միս—ի, ս, մ.

իմ, մի, մին, ուս, ում, շիշ.
շուն ու միս. միս ու շուն.

Ջուր—Ջ, ր.

ուր, ուշ, ուս, ում, իր, իմ, սուր, մուր, շիշ, սուս, Միս. ունիմ, ունիս, ունի. շուն ունիմ. Միս ունիս. Նուշ ունի.

II.

Շունը—ը.

ըն, նը, ըշ, շը, ըմ, մը, ըս, սը, ըջ, ջը, ըր, րը. շունը, միսը, ջուրը, նուշը, սուրը, մուրը, շիշը.

Էշ—է.

էշ, էս, էն, էր, էջ, ուշ, ուս, ուր, ում. նուշ, շուն, շէն, մէջ, սէր, սուր, իր, մին.

Շուն. Նուշ. Միս. Սուր. Ջուր. Էշ. Էմին.

III.



սագ—ա, գ.

աս, սա, ան, նա. սան, շար, գամ, գաս, մաս. սուր, մուր, մուգ. իմ, միս, գիր, գին, աջ, էջ. գինի, գարի, անուն, անուշ, աշուն, շուշան. Անուշ, Գարուն, Սարգիս, Սիրուն, Շուշան.

բաղ — բ, դ.

բան, ջան, բաղ, բաշ, դաս, սա, սար, սարդ.
բու, բուն, դու, դուր, դուրս, մուր, սուր, ջուր.
գաջ, գիր, արի, բարի, գարի, մարի, դարբին.

Դու բաղ ունիս։ Նա ունի սաղ։
Դու ունիս բաղ։ Նա սաղ ունի։
Բաղ ունիս դու։ Սաղ ունի նա։

լիճ — լ, ճ.

սա, սար, սալ, լալ, լար, գալ, բալ, շալ, լուր, Լիմ.
ճար, ճաշ, ճանճ, սուրճ, մանճ, մուրճ, ճրագ,
ճագար, ճիճու, գըդալ, լուսին, գնալ, գալ, ինալ.

ա, ու, ի, է, ը, շ, ն, ս, մ, ր, ջ, գ, բ, դ, լ, ճ.

Ա, Ի, Է, Ը, Շ, Ն, Ս, Մ, Ր, Ջ, Գ, Բ, Դ, Լ, Ճ.

IV.

հաւ — հ, ւ. Հ, Ւ.

հա, ահ, բահ, շահ, մահ, գահ, ջահ, հուր, գէշ.
նա, նաւ, դա, դաւ, բան, բաւ, դու, դուր.
հաւան, սաւան, դիւան, հալաւ, ասաւ, հասաւ.

ճագ — ճ, Ճ.

ճի, ճու, ճիգ, ինճ, հունճ, հունդ, գունդ, գանճ,
սանճ, սինճ, ճագար, ճագար, ճաւար, հիւանդ.

ցին—ց, Ց.

Հա, Հաւ, ցաւ, Նաւ, Հաց, Հունձ, Հունց, ցան, ցուլ, ցից, Հին, գին, բաց, լաց, լից. Ցին—ուրուր.

Գնացի, գնացիր, գնաց:
Մնացի, մնացիր, մնաց:
Ասացի, ասացիր, ասաց:

V.

մուկ—կ, Կ.

Էս, կէս, գէս, գէշ, կալ, գալ, կիր, գիր. կար, գար, արջ, կարճ, մէկ, մէգ, կարի, գարի. գարուն, կարիճ, կացին, Զուիկ, Ընձակ, Կարին.

կատու—տ, Տ.

կուտ, տուտ, սուտ, շուտ, ճուտ, մատ. լիճ, ջիլ, ճիտ, տանձ, գանձ, սանձ, ցանկ. կարագ, կարաս, կաւիճ, Տաճատ, Դատ.

մարտ, մարդ, տար, դար. տատ, դատ. տաշտ, դաշտ. տուր, դուր. տաս, դաս.

Կուտ	Անուշ	Ընտանի
Նուշ	Շուշան	Համբարձում
Շուն	Նաւակ	Գանձանակ
Տուն	Սարգիս	Սանասար
Նաւ	Մինաս	Արարատ
Կաւ	Զանիկ	Դատաստան
Կէս	Սահակ	Իսկուհի
Տիկ	Գարուն	Բանական
Ճաշ	Բամբակ	Բաւական
Մատ	Դանակ	Ցաւագար
Սան	Լուսիկ	Բազարատ
Դաս	Ճակատ	Անուշաւան

VI.

Կաղնի—ղ, Ղ.

աղ, աղուն, կաղ, կաղին, մաղ, մաղիկ, ուղի,
ուղիղ, ջաղաց, ճաղատ, ճակատ, Ղուկաս.

ծառ—ծ, ռ, Ծ, Ռ.

ծալ, ծամ, ծիտ, ծիծ, ծիր, ճիր, ճագ, ծակ.
ուր, ուռ, սար, սառ, դար, դառ, դուր, դուռ.
կար, գառ, ծիրան, ծիծառ, ծարաւ, ծառուկ.
գարուն, գառնուկ, Ծատուր, Ռուբէն, Ռուս.

եղէգ—է, Է.

ել, ելակ, եկ, եկաւ, ես, Եսաւ, եղ, եղան.
եղն, եղնիկ, երգ, երկիր, երկար, երկու, Եւա.

էս, ես, էդ, եդ, ետ, էն, են, էգ, էկ, էլ, ել.
էակ, ելակ, երակ, էրէ, էջ, Էջ-մի-ա-ծին.

մէջ, մէկ, մէգ, շէկ, կէս, գեր, կէտ, սէր, տէր.
կեր, սեր, հեր, բեր, նետ, նեղ, մեղ, մեծ, ծեծ.
սեղան, բերան, գերան, ճերմակ, մեղու, ուղեղ.

Գրում եմ, կարդում ես, կարում է։
Ես գրում եմ, դու գրում ես, նա գրում է։

Իսահակը կարդում է դասը։
Անուշը կարում է հալաւ։
Նունուշը գնում է տուն։
Մինասը գալիս է ուսումնարան։
Ղուկասը ջրում է արտը։
Ծատուրը սրբում է բաղը։
Եսաւը ճաշ է ուտում։
Զաւահիրը կար է անում։
Լուսիկը նամակ է գրում։

ՄԸ.

ոզնի—ո, Ո. զ, Զ.

ոտ, որ, ող, որս, ոգի, ոսկի, ոստիկ, Ոսկան.

զաւակ, ընկուզ, ընկեր, ընտիր, աւազ, ազատ, գազան, զատիկ, ազգական, գաւազան, Զարեհ։

օձ—օ, Օ.

օղ, օր, օն, օշ, օդ, օտար, օգուտ, օրէն, օրինակ.

օր, որ, օդ, ոտ, օղ, ող, օձ, որձ, օրէն, որ-էն.
հօր, հոր, մօր, մոր, հօտ, հոտ, մօտ, մոմ.
աղօտ, աղոտ, արօտ, կարօտ, հողոտ, բորոտ.

Մագ—սագեր—սագ էր։ Ջուր—ջրեր—ջուր էր։
Հաւ—հաւեր—հաւ էր։ Գիր—գրեր—գիր էր։
Բադ, նաւ, ծառ, մաղ... Ջուն, տուն, սուր, թուր...
Ջոր, հաց, ուղտ, տէր, բան... Սիրտ, միս, նուշ, բուրգ...

ՄԹ.

ոչխար—չ, Չ. խ, Խ.

խաղ, խաւ, խակ, խոզ, խոտ, խոց, սոխ, խուռնկ, խուրձ, խիստ, խմոր, խաւար, խառատ, Խորէն.

չար, չոր, չանկ, մինչ, մանչ, չամիչ, չէչոտ, աչիկ, կանաչ, կաչաղակ, ճախարակ, Խաչիկ, Զատի.

կաղ, կախ, ցեղ, ցեխ, աղ, ախ, աղտ, ախտ, ձախ, ծախ, ճախ, ճաղ, մեխ, մեղ, սոխ, սող. խաղող, խաղացող, աղախին, Աղասի, Ղարաբաղ.

Կաթ—կ, Թ.

Թաթ, Թութ, Թան, Թուխ, Թուշ, Թող,
Թի, Թոկ, կոթ, Թիւ, Թել, Թուզ, Թումբ.
Կանթեղ, գաւաթ, գաւիթ, Դաւիթ, Թոմաս.

տատ, դատ, Թաթ, տուր, դուր, Թուր.
տէր, դեր, Թեր, մարտ, մարդ, մարթ.
տաս, դաս, Թաս. մուտ, մութ. որդ, որթ.

Պանիր—պ, Պ.

պար, պաս, պաղ, պապ, կապ, բան, պան,
բաղ, պատ, բանիր, պանիր, բարի, պարի,
բարակ, պարապ, կապիկ, կոպէկ, Պողոս.

Ես գրում եմ, դու գրում ես, նա գրում է։
Ես կը գրեմ, դու կը գրես, նա կը գրէ։
Ես գրեցի, դու գրեցիր, նա գրեց։
Օձը սողում է։ Օձը սողաց։ Օձը կը սողա։
Ձուկը լողում է։ Ձուկը լողաց։ Ձուկը կը լողա։
Ոզնին ման է գալիս։ Ոզնին ման եկաւ։ Ոզնին ման կը գա։

IX.



Կով—վ, Վ.

վար, վառ, վատ, վարդ, վէգ, վէմ, վեց, վեր,
վուշ, վիհ, վէճ, վերմակ, վիճակ, Վարդան.

կաւ, կաւիճ, հաւ, հաւատ, նաւ, նաւակ.
ցաւ, ցաւոտ, Թեւ, Թեւաւոր, Թաւ, Թաւիշ.

կով, հով, սով, բով, բարով, սրով, տարով.
Թիւ, անիւ, ազնիւ, կռիւ, արծիւ, պատիւ.

ով, ովկիանոս, ովսաննա, Ովակիմ, Ովսիա.

իւ, իւր. թիւ, թիւր. անիւ, ալիւր. ազնիւ, աղիւս. արիւն, աճիւն, աղբիւր, Կորիւն. մեծաթիւ, մեծութիւն. բազմաթիւ, բազմութիւն։

Կովը կաթն է տալիս։ Կաթը մէրում, մածուն են շինում։ Մածունը հարում, կարագ են հանում։ Կարագը հալում, իւղ են շինում։ Կաթը առողջարար խմելի է։

Ոչխար—ոչխարներ—ոչխարն էր։
Զաւակ—զաւակներ—զաւակն էր։
Ոսկի, ոզնի, ցորեն, գարի, մատիտ, տետրակ...
Մանուկ, աղուն, գրիչ, բրիչ, կրակ, ճրագ...

Աշակերտը գրչով գրում է դասը։
Աշակերտը դասը գրչով է գրում։
Դերձակը շորերը կարում է ասեղով։
Դերձակը ասեղով է կարում շորերը։
Շորերն ասեղով դերձակն է կարում։
Տանտիկինը մածնից իւղ պատրաստեց։
Խոհարարը մսից կերակուր եփեց։

X.



փիղ—փ, Փ. ֆ, Ֆ.

փուփ, փակ, փոս, փոր, փող, ծափ, թեփ. փափուկ, կանեփ, փետուր, փողոց, Փրկիչ.

փիղ—Փիլ. նաւթ—Նաֆթ. փէս—Ֆէս. փլաւ—Ֆիլաւ. փուրգոն—Ֆուրգոն. մափրաշ—մաֆրաշ։

Քոթոթ—Ք, Ք.

Քար, քիթ, քող, քուրք, հանք, փառք, քուրդ.

Կող, գող, քող. կար, գար, քար. կարի, գարի, քարի. կանոն, քանոն. Քրիստոս, Քերովբէ.

Մաքի ոչխար. մատակ ձի. մարի հաւ. մէրուն խոզ.

Ժանիք—Ժ, Ժ.

Ժամ, ժիր, կուժ, ժանգ, ուժ, բուժ, բաժակ. բաժին, արժան, պատիժ, բժիշկ, ժպիտ, ժողով.

Փիղը ժանիքով պաշտպանում է իւր անձը:
Բժիշկը բաժակով դեղ տուեց Հիւանդին:
Ժամագործը Քուրգօնով տեղափոխեց ապրանքը:
Ֆէտաւոը մարդը փողոցներում նստած է ծախում:

Հեղինէն փող տուեց աղքատին:
Հեղինէն աղքատին փող տուեց:
Փողն աղքատին տուեց Հեղինէն:
Մանուկը պատիւ է տալիս ծերերին:
Գայլը սիրում է իւր թոռներին:

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ЯЗЫКОЗНАНИЯ Академии Наук СССР





Մի հայր, որ իրեն է, սուրբ
իմի ի անունը. գայ ի քաղա-
ւորութիւնը, իմի ի կամքը իրերի
մի երայ, ինչպէս երկնի. Մի
աւիւր ի այ հայր զոր մի այսօր.
թող մի մի պարտիքը, ինչպէս
որ մենք թողում մենք մի պարտա-
պանների. մի փորձանքի մի
տանիր, այլ փրկիր մի չարից, որ.
ովհետև ի նեն է քաղաւորութիւնը
զօրութիւնը և փառքը այժմ և
յաւիտեան:

XI.

յոպոպ—յ. Յ.*)

Հարկ, յարկ, յարգ. Հարթ, յարդ. Համբ, յամբ.
Հետ, յետ. Համար, յամառ. Հատիկ, յատակ.
Հատու, յատուկ. Յունապ, Յիսուն, Յիսուս.

ա) ա՛յ, է՛յ, վա՛յ, հա՛յ, բա՛յ, օ՛յ, Նո՛յ, Թէ՛յ, Հէ՛յ.
բ) գաթա՛յ, ծառա՛յ, փեսա՛յ, տեսա՛յ, յետո՛յ, երեկո՛յ.
գ) մայր, հայր, այծ, կայծ, գայլ, այր, այրի, այգի.
դ) քոյր, ծոյլ, թոյլ, յոյս, բոյս, լոյս, Պարոյր, Վրոյր.

Յիսուսն օրհնեց բարի մանուկներին։
Մարդիկ չեն յարգում յամառ տղաներին։
Հայրս հրաւիրեց ծերունի քահանային։
Կայծը հրդեհեց խոտի դէզը։
Գայլը պատառոտեց այծի ուլերը։
Այս երեկոյ այգում թէյ կը խմենք։
Մայրս մեզ համար գաթայ է թխում։
Այրի կինը այծի կաթն էր ծախում։
Քոյր ու եղբայր աշխոյժով խաղում էին։
Ծոյլ տղան իր յոյսը դնում է ուրիշների վրայ։

*) յ տառը բառի սկզբում որպէս հ։
ա—միավանկների վերջում որպէս կէս ի։
բ—բազմավանկների վերջում մնում է համր։
գ—բառի մէջը բաղաձայնից առաջ (աի)։
դ—ո-ի հետ բաղաձայնից առաջ (ոյ)։

36373-60
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ա. ՄՅՈՒՐ
ՀԱՅԿԱՆ

ո, ւ—ու. եւ—և. ե, ա—եա.

ուշ, ուղտ, ուղիղ, ուղեղ, ուրախ, ուրագ.
ձու, լու, բու, աղու, լեզու, առու, մեղու.
ձուի, լուի, բուի, լեզուի, առուի, մեղուի.
աղուէս, պատուէր, նուէր, Աստուած:

եւ—և. սեւ—սև. թև, արև, անձրև, տերև.
Հոգեակ, որդեակ, սենեակ, Արուսեակ, Երանեակ:

Առաւօտեան ես վարժարան եմ գնում:
Ժամը ութին մեր դասերն սկսւում են:
Երեկոյեան պատրաստում եմ միւս օրուայ դասերը:
Քոյրս էլ ուսումնարան է գնում կարդալու:
Ծոյլերի նման մենք մեր յոյսը ուրիշների վրայ չենք դնում:—Հայրս միշտ խրատում է մեզ, որ մեր ժամանակն ի զուր չվատնենք:

Խելօք երեխան այսպէս պիտ՝ լինի՝
Կանուխ պիտ՝ զարթէ, շուտ քուն պիտ՝ մտնի,
Պիտի չմաշէ սիրտը հօր ու մօր,
Դպրոց պիտ՝ երթայ, կարդայ ամեն օր:

Ամբողջ այբուբենը

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ,
խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո,
չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք,
և, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ,
ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք,
եւ, օ, ֆ:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ,
Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ,
Տ, Ր, Ց, Ւ, Փ, Ք, Օ, Ֆ:

ԾՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՐՈՅԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ ԵՒ ՄԱՆՐԻԿ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

1. ԱԳԱՀ ԶՈՒՆ

Մի շուն կար։ Մի օր այս շունը, մի կտոր միս բերանին, պիտի անց կենար կամուրջով։ Անց կենալիս՝ ցած նայեց ջրին և տեսաւ, որ մէկ ուրիշ շուն գնում է ջրի միջով՝ բերանին բռնած մի մեծ մսի կտոր։ Շան ագահութիւնը շարժուեցաւ. նա ցած թռաւ կամուրջից և կամեցաւ միւսի ձեռքից խլել մսի կտորը։

Բայց ի՞նչ. ցած թռչելիս՝ իր բերանի կտորն էլ վէր գցեց, ջուրը տարաւ. ջրի մէջն էլ ոչ շուն կար, ոչ մսի կտոր. կենդանին խաբուել էր իր ստուերից։ Ագահութիւնը զրկեց նրան իր ունեցածից։

2. ՀՐԱՒԷՐ

Եկէք, քարեկամք, եկէք,
Արագ արագ վազեցէք։

Դասի սեղանն պատրաստուած,
Դասագրքերն են բերուած։
Ժամանակ է, վազեցէք,
Եկէք, քարեկամք, եկէք։

3. ԷՇԸ ԵՒ ՁՈՒՆԸ

Էշը քարեկամացաւ շան հետ և խնդրեց, որ միասին ճանապարհ գնան։ Շունը համաձայնուեց։ Ճանապարհին երկու ընկերները մի խոտաւէտ տեղ կանգնեցին, որ հանգստանան։ Երկուսն էլ յոգնած էին, երկուսն էլ սոված։ Էշն սկսեց ախորժակով արածել կանաչ խոտը։ Շունն ուտելու բան չունէր։

—Ընկեր շան, խուրջինումդ բաւական հաց կայ, ասաց նա էշին. տուր ինձ մի կտոր հաց. սոված մեռնում եմ։

«Խոտ շատ կայ այստեղ, կեր դու էլ ինձ պէս, ասաց էշը. հացը ես ուրիշների համար եմ պահում»։

Շունը հոտոտեց խոտը, պոկեց մի քանի հատ, ծամծմեց ու վէր ածեց.

—Ես խոտ չեմ կարող ուտել, էշ քարեկամ, ասաց շունը. այդ կերակրին ես սովոր չեմ. ազաչում եմ՝ մի պատառ հաց տուր, անօթի եմ։

Էշն այս անգամ ականջ էլ չդրեց շան աղաչանքին. նա աջ ու ձախ հնձում էր անուշ խոտը և ուտում։

Այդ միջոցին թփերի տակից երևեցաւ գայլը—իշի թշնամին. նա համարձակ դուրս վազեց անտառից, բայց երբ տեսաւ շանը, կանգնեց, գունչը երկարացրեց և տխուր ձայնով օռնաց։

Էշը զարհուրեցաւ. «Ի՞մ սիրելի, իմ պատուական ընկեր, ասաց նա, ահա քեզ բոլոր հացը, կեր, անուշ արա, միայն թէ ազատիր ինձ չար գազանի ատամներից»։

Ձունը երեսը շուռ տուեց։—Դու արժանի չես, որ ես քո հացի պռունկը կտրեմ, ասաց նա. քաղցածութիւնն ինձ չի սպանիլ. ես կը մտնեմ անտառը, կերակուր կը գտնեմ. դու էլ, եթէ կարող ես, գլխիդ ճարը տես։

Ասաց ու հեռացաւ ձունը։ Մի բոպէի մէջ գայլը պատառոտեց էշին։

4. ԱՐԵՒ

Արեւ-արեւ, եկ, եկ,
Ձիզի քարին վեր եկ,
Մեր ոչխարին մոռիկ արա,
Որ գայլը գայ իմաց արա։

5. ՍԱԳՆ ՈՒ ԲԱԴԸ

Սագն ու բադը գնացին լճի ափը, որ համ մի փոքր լողանան, համ էլ ուտելու բան գտնեն։ Լողացան, մաքրուեցան, յետոյ յետ դարձան և սկսեցին իրար հետ զրոյց անել։

—Բադիկ, կցեց սագը, տեսնում ես, ինչ հնորհալի թռչուն եմ ես՝ ջրումը լողում եմ, օդումը թռչում, գետնի վրայ էլ ման եմ գալիս. ասա, խնդրեմ, ինձ նման էլ կենդանի կայ աշխարհումս. ես բոլոր թռչունների թագաւորը չեմ։

«Ես էլ հէնց դրա վրայ էի մտածում, ընկերս, պատասխանեց բադը. կասկած չկայ, որ դու շատ հնորհալի թռչուն ես. բայց ես էլ քեզանից պակաս չեմ. տես թէ ինչպէս եմ սուրուր տալիս ջրի երեսին, խաղում փրփրուն ալիքների հետ, ինչպէս եմ մտնում ջրի տակը, մանրիկ ձկներ ու ճիճուներ բռնում, նորից դուրս գալիս, ուռչում թագուհու պէս։

Հա, հա, ընկերս, մենք շատ զարմանալի թռչուն ենք. մեզ նման հնորհրով կենդանի չկայ աշխարհումս։

Լճի ափին ծառի վրայ վեր էր եկել ագռաւը և ականջ էր դնում դրանց։ Երբոր բադը խօսքը վերջացրեց, ագռաւը կանչեց. «Ա՛յ միամիտ թռչուններ, ինչի՞ էք հպարտանում։ Կարող ես դու, սագիկ, չան պէս արագ վազել»։

—Ոչ, պատասխանեց սագը։

«Իսկ դո՛ւ, բադիկ, ծիծեռնակի պէս թռչիլ կարող ես»։

—Չեմ կարող, ասաց բադը։

«Իսկ ձեզանից ո՞վ կարող է լող տալ ձկան նման»։

Սագն ու բադը գլուխները կախ գցեցին։

Ուրեմն էլ ինչի՞ էք հպարտանում։ Ես կարծում եմ, ընկերներ, որ աւելի լաւ է, երբ մարդս մի բան գիտէ ու հիմնաւոր, քան թէ շատ բան ու բոլորն էլ թերի։

6. ԲԱԴԻԿ

«Բա՛դիկ—բադիկ,
Կարմիր թաթիկ,
Ո՞ւր ես գնում կամաց-կամաց,
Ձագուկներդ հոս կողմդ առած»։
—Ես գնում եմ ջուր գտնելու,
Ձագուկներս լուանալու.
Ձագուկներս մաքուր-մաքուր,
Տղոց երեսն աղտ է ու մուր։

7. ՀԱՒԸ ԵՒ ՁԱԳԸ

Հաւը ձագերն առաւ ու գնաց քջուջ անելու։ Քջուջ անելիս՝ մայրը նկատեց, որ ուրուրը պտտում է երկնքումը և նայում է ձագուկներին։ Մայրը ձայն տուեց։ Ձագերը հասկացան՝ որ վտանգ կայ, վազեցին, մտան մօր թևերի տակ։ Ցինը երկար պտտեց և էլ ճուտ չտեսնելով՝ գնաց։ Հաւը բաց արեց թևերը։ Ձագերը նորից սկսեցին վազվզել ու խաղալ։ Անց կացաւ մի քանի րոպէ։ Սրատես ուրուրը հեռուից նկատեց ձագերը և դէպի նրանց թռաւ։ Հաւն էլ քնած չէր։ Նա բարձր ձայնով կանչեց իր ձագերին։ Վազեցին ձագերից շատերը, մտան իրանց մօր թևի տակ։ Բայց մի ձագուկ ականջ չարեց իր մօր ձայնին։ Նա կարծեց, թէ ուրուրն իրան մնաս չի տալ, առաջուայ պէս կ'անցնի կերթայ։ բայց սխալուեց։ Ցինը նետի պէս ցած իջաւ և նրան ճանկերի մէջ առաւ, տարաւ։

8. ԱՌԱՒՕՏ

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն է բարին,
Ծիտն է ծառին,
Հաւն է թառին.
Ա՛շխատասէր, վեր կաց քանի,
Ծոյլ մարդու քունը տանի։
Երկնքի դռները բաց է,
Ոսկէ աթոռը դրած է,
Քրիստոսը վրէն նստած է,
Լուսաւորիչը կանգնած է.
Մեծ ու պստիկ գրում են,
Արդարները խաղում են,
Մեղաւորները լալիս են։

9. ԿԱՏՈՒՆ ԵՒ ՄՈՒԿԸ

Մի չար կատու կար. նա խեղդում էր ձեռն ընկած մուկը և սաստիկ նեղն էր գցում նրանց։ Մկներն էլ յիմար չէին. նրանք շուտով ճանաչեցին իրանց թշնամուն և աշխատում էին թագկենալ. երբոր կատուն տանն էր, ընիցը դուրս չէին գալիս։ Բայց փիսօն խորամանկ էլ էր. նա գնաց ամբարը, ալրի մէջ թաթախուեցաւ և, այդպէս սպիտակած, մտաւ հացի տաշտը և նրա մի անկիւնում կուչ եկաւ։ Երկար ժամանակ կատուի ձայնը չէր լսւում։ Մկները կարծեցին, թէ սատկել է, դուրս եկան ծակերից և սկսեցին ուտելու բան որոնել։ Մէկ մուկը մօտեցաւ հացի տաշտին, նայեց, տեսաւ մի սպիտակ բան։ «Լա՛ւ է, ասաց նա, այստեղ համ հաց կայ, համ պանիր»։ Ասաց ու մօտ վազեց պանրին։ Պանիրն էլ մեր ալրակոլոր կատուն էր. սա թաթը մեկնեց և տեղն ու տեղը խեղդեց մկանը։ Յետոյ եկաւ երկրորդը, երրորդը, չորրորդը. իսկ մեր փիսօն ամենքին էլ խեղդոտեց։ Վերջապէս մօտ եկաւ մի ծեր ու փորձուած մուկը, կանգնեց տաշտի շրթունքին և զգոյշ նայեց սպիտակ բանին. յետոյ ճանաչեց նրան ու ասաց. «Է՜յ բարեկամ, քո սպիտականալը մի գրօշ չարժէ. ճանաչեցի՛, մլաւան կատուն ես. գոյնդ ես փոխել, հոգիդ միևնոյն է»։ Ասաց ու փախաւ, ընկերներին իմաց արաւ։

10. ՓԻՊՈ

Կատուն եկաւ, փիսիկ-փիսիկ,
Հազար նազով, ինչպէս հարսիկ,
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց շանչիկներով։
—Կատու, կատու, էր ես տրտում,
Թէ մկներն են այսօր արթուն։

11. ԿԱՂՆԻ ԾԱՌԸ ԵՒ ԵՂԷԳԸ

Անտառի կողքին բարձրացել էր մի մեծ կաղնի։ Սրանից քիչ հեռու աճել էր և եղէգնիկը։ Մի օր կաղնի ծառը գլուխը շարժեց և ասաց եղէգնին. «Ի՞նչքան անպէտք ես և թոյլ, այ ողորմելի. ամեն մի մանուկ կարող է քեզ կտրել, կտրատել. թեթև քամին էլ թեքում, գետնիցն է կպցնում քեզ։ Իսկ ես, նայիր, որքան մեծ եմ և յաղթանդամ. ես բանի տեղ չեմ դնում գիւղացի մանուկներին, չեմ էլ վախենում քամուց ու փոթորկից. ես բոլոր ծառերի թագաւորն եմ։—Այս ասած—չասած, սաստիկ փոթորիկ բարձրացաւ։ Անտառը տարուբերուեցաւ քամու առաջ։ Փոքրիկ եղէգը կռացաւ, գետնիցը կպաւ։ Հաստարմատ կաղնի ծառը սկսեց քամու առաջ օրօրուիլ. նրա արմատները ճրճռացին, տրաք-տրաքեցին և հպարտ կաղնին վայր ընկաւ, ճղնակոտոր եղաւ։

Քամին անցկացաւ։ Փոքրիկ եղէգը նորից բարձրացրեց իւր ճկուն գլուխը և, նայելով իւր հարևանին, մտածեց. «Ով որ փքանայ, շուտով չքանայ»։

ԱՂՔԵՔ ԾԱՔԸ

(ՔՐՈՋ ԽՆԴՐՈՒԵԾՔԸ)

Ելնեմ ծառը՝ զարդարեմ
Վեր գամ տակը՝ միխթարեմ։
Հաւի վառիկը մորթեմ,
Տանեմ գետը, լուանամ,
Եփեմ ու շոքանին տամ։
Շոքանն ինձ մի ոչխար տայ,
Ոչխարն Աստուծուն տամ։
Աստուած ինձ մի եղբայր տայ։
Եղբայր—եղբայր, ջան եղբայր,
Ջանս քեզ մատաղ եղբայր,
Կաբայ եմ կարել, կարճ է եկել,
Բուզմայ եմ շարել, խոշ է եկել,
Ճընճղուկի լեզուն մեղրով
Քեզ համար եմ տապակել։

13. ՈՉՆԻՆ ԵՒ ՕՁԸ

Որսորդը տեսաւ ոզնուն և յետևից ընկաւ, որ բռնէ։ Ոզնին փախաւ, ժայռի տակ մտաւ և կամենում էր մի տեղ գտնել պահուելու։ Ժայռի տակն էլ իրան համար բուն էր չինել օձը և, նրա մէջ կուտապ եկած, ննջում էր։ «Բարեկամ, ձայն տուեց ոզնին, վտանգի մէջ եմ. օգնիր, տեղ տուր, որ պահուիմ. երբոր որսորդը կը հեռանայ, շնորհակալութիւն կանեմ քեզ»։ Օձը յետ քաշուեց։ Ոզնին ներս մտաւ խոռոչը և որսորդից ազատուեց։ Վտանգն անցած էր։ Օձն ասաց ոզնուն. «Ընկեր, փշերդ ինձ նեղութիւն են տալիս. հեռացիր, գնա»։—Ոզնին բարկացաւ։ Ի՞նչպէս ես

համարձակւում, սողուն անպիտան, այդ լեզուով խօսել հետս. հեռացիր աչքիցս, քանի դեռ կենդանի ես, ապա թէ ոչ...» Եւ ապերախտ կենդանին պատրաստւում էր յարձակուիլ իւր բարերարի վրայ, բայց օձը, նրա միտքը հասկանալով, թռղեց իւր տունն ու փախաւ։



14. ԳՈՂ ԱՂՈՒԷՍ

Աղուէսը պարկեց աղբի տակին,
վուշ-վուշ.
Աչքը զցեց հաղ հաւի ձագին,
վուշ-վուշ.
Նեռով կըտամ՝ աչքի տակին,
վուշ-վուշ.
Որ մօտ չգայ նա մեր բակին.
վուշ-վուշ.

15. ՈՉԽԱՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Մի անգամ ոչխարը գնաց առուակի մօտ, որ ջուր խմէ։ Այդ ժամանակ միևնոյն առուակից ջուր էր խմում և գայլը։ Գայլը վերևն էր կանգնած, ոչխարը ներքևը։ Շար գազանը կամեցաւ ոչխարին ուտել։ Նա վերևից ձայն տուեց. «Էյ, դու, ինչպէս ես համարձակւում ջուրս պղտորել. այդ բանի համար ես քեզ խկոյն կը խեղդեմ, կ'ուտեմ»։

—Տէր իմ, կանչեց ոչխարը, ինչպէս կարող եմ քո ջուրը պղտորել. ես ներքևն եմ կանգնած, իսկ դու վերևումն ես։

«Պղտորում ես, թէ չես պղտորում, այդ միևնոյն է, ես քեզ պէտք է ուտեմ. ձեր ցեղը միշտ թշնամի է եղել ինձ. երեկ ես ուզում էի մօտենամ հօտին, քո հայրն էր, որ շներին իմաց տուեց. նրանք յետևիցս ընկան, քիչ մնաց պատառ-պատառ էին անում»։

—Ես հայր չունիմ, տէր, հայրս վաղուց մեռել է։

—«Ուրեմն մայրդ կըլինէր»։

—Մայր էլ չունիմ. մայրս հէնց այն օրը մեռաւ, երբ ինձ ծնեց։

«Ուրեմն ազգականներիցդ մինը կըլինէր. ինչ էլ որ լինի, դու միշտ մեղաւոր ես իմ առաջ»։ Այս ասաւ չար գազանը և անմեղ ոչխարին խեղդեց ու լափեց։

16. ԳԱՌՆՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ,
Մօրդ քաշում՝ ես կարօտ.
Մի լար, գառնուկ սիրական,
Փոքրիկ տղի դու նման.
Կըգայ մայրդ, հետը շատ
Կըբերէ քեզ անուշ կաթ։

17. ԿԹԻԿՈՎ

Մարդու մէկը մի կով է ունենում։ Կովը կաթնով կերակրում է նրա բոլոր ընտանիքը։ Տանտիկինը կաթնից

մածուն է մէրում։ Մածունը պատրաստի կերակուր է խեղ-
ճի զաւակների համար։ Կաթնից և մածնից խնոցի է հա-
րում տանտիկինը՝ իւղը հանում՝ պահում է, թանն էլ ե-
փում՝ կերակուր է շինում։ Կովի կաթնից պանիր էլ է
շինում՝ ձմեռուայ համար պահում։ Այսպէս՝ կաթնատու
կովը գիւղացու համար մեծ հարստութիւն է։ Մեր ասած
կովն էլ կաթնատու կով էր. օրէնը երկու անգամ կթւում
էր նա և ամեն անգամ մի մեծ կովկիթ կաթն էր տալիս։
Մի անգամ գիւղացին հիւրերի էր սպասում. խնամիքը
հարևան գիւղից տեսութեան պիտի գային. կաթը շատ
պիտի հարկաւորուէր. պէտք էր կարագ, սեր, մածուն
պատրաստել հիւրերի համար։ Ի՞նչ անէր տանտիկինը։
Մտածեց, մտածեց խելօքը և վճռեց, որ երեք-չորս օր
չըկթէ կովը։ «Յետոյ վերջին օրը հինգ-վեց կովկիթ միան-
գամից կըկթեմ», ասաց նա։ Բայց ի՞նչ. երեք-չորս օրից
յետոյ՝ երբ ուզում էր կթել, տեսաւ որ ցամաքել է. ան-
կթիլ մնալուց կաթը յետ էր տուել կովի ծծերում։ Խեղճ
տանտիկինը նոր հասկացաւ, որ ամենայն ընդունակութիւն
բթանում է, երբ չի գործածւում։

18. ԽՐԱՏ

Մի՛ խնդրիր Աստուծուց ոչ փող, ոչ պատիւ,
Այլ քեզ կրթելու խելք, շնորհք, սիրտ ազնիւ,
Երբէք մի պարծենար, թէ արդէն գիտուն ես.
Որքան քան սովորես՝ այն է օգուտ քեզ։
Ընկերներիդ օգնող եղիր,
Աղքատներին սէր ցոյց տուր.
Տէրն ասում է՝ չէ անվարձ
Նաեւ բաժակ մի ցուրտ ջուր։

---

19. ՓԻՂ ԵՒ ՔՈԹՈԹ

Փղապանը փողոցներից անց էր կացնում իւր ձեռնա-
սուն փիղը՝ մարդկանց ցոյց տալու, փող հաւաքելու համար։
Մարդիկն էլ մեծ բազմութեամբ հետևում էին նրան։ Յան-
կարծ մի փոքրիկ քոթոթ, որտեղից որ էր, դուրս վազեց
և սկսեց սաստիկ հաչել նրա վրայ։ Մեծ շունը տեսաւ այդ
և ասաց. «Ձայնդ կտրի՛ր, ա՛յ լակոտ, դու ո՞վ ես, որ փղի
դէմ հաչում ես. ահա դու հեւում ես. իսկ նա հաչելուդ էլ
ուշք չի դարձնում. հանդարտ ու անխռով շարունակում է
իւր ճանապարհը»։

Ես հօ նրա համար չեմ հաչում, որ փղին վախեցնեմ,
պատասխանեց քոթոթը. իմ միտքս այն է՝ որ ուրիշները
նկատեն իմ արածը և ասեն. «Տեսէ՛ք՝ քոթոթն որքան քաջ
է, որ փղի դէմ էլ կը հաչէ»։

20. ՏՂԱՅՈՑ ԱՂՕԹՔ

Հայր մեր երկնաւոր, հայր ամեն մարդի,
Դու ինձ ամեն օր տաս հազար քարի՝
Կեանք, լոյս, կերակուր, հայր եւ քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր.
Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ինչ տամ Քեզի.
Առջեւդ կընկնիմ, կենամ աղօթքի.
«Շնորհդ տուր ինձ, որ ծնողներիս,
Ուսուցիչներիս եւ իմ մեծերիս
Լինիմ սիրելի, իսկ Քեզ հաճելի»։

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄԵԱԿ

ՔՆԴԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՅԵՏՈՅ

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ



1. ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԽԱՂԱԼԻՔ

Դասական առարկաներ՝ գիրք, գրիչ, քանոն, մատիտ, տետրակ, քարետախտակ, քարեգրիչ, թանաքաման, կաւիճ . . .

Խաղալիք՝ գնդակ, տիկին, հոլ, վէգ, չիլիկ, չիլկափայտ, պտուտակ . . .

ԲԵՐԱՆՑԻ ԵՒ ԳՐԱՒՈՐ

Քարեգրիչը դասական առարկայ է։ Գնդակը խաղալիք է։ Մատիտը. տետրակը. տիկինը. քանոնը. թանաքամանը. հոլը. չիլիկը. գրչահատը. գրատախտակը. քարետախտակը։

Գիրք՝ մէջը քաղցը միրգ։—Ինչ որ գրուեցաւ գրիչով, չի հանուիլ բահով բրիչով։—Մատիտը մատիդ, կոշիկը ոտիդ, ճամպայ որ երթաս, միշտ լինին մօտիդ։—Հոլը

կ'ուզէ խարազան, որ պտոյտ գայ անխափան։—Վէգի կարմիրն է սիրուն՝ վաստակ է գարկողներուն։—Զուան ցատկիլն օգտակար շարժմունք է մանկանց համար։

Առածներ։—Ով կը կարդայ, նա մարդ ա։—Ով կը խաղայ նա կը կաղայ։—Ով կ'աշխատի նա կ'ուտի։

Հանելուկներ.—1. Գլուխս կտրեցին, սրտիկս հանեցին, գինի խմացրին, լեզուս բացուեցաւ, խօսիլ սկսաւ։—2. Քանի որ ծեծը կ'ուտէր, ուրախութեամբ կը պտտէր, երբոր ծեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

—oo—

Որդին

Խնդրում եմ, հայրիկ,
Ասա ինձ, քաղցրիկ,
Ինչու ամեն օր
Եղբայր Գրիգոր

Ջուտ է վեր կենում,
Եւ ուր է գնում.
Ինչու մինչև ճաշ
Տուն չէ յետ դառնում։

Հայրը

Աչքիս լոյս, եղբայրդ
Ամեն առաւօտ
Դպրոց է գնում,
Եւ մինչև ճաշը
Այնտեղ է մնում.
Այնտեղ են գնում
Եւ միւս մանուկներ,
Նորա ընկերներ.
Նոքա գնում են,
Որ ուսում առնեն
Եւ յետոյ բարի,
Խելօք մարդ լինեն։

ԴԱՍԱՏՈՒՆ

Դասատան մէջ նստած են աշակերտները։ Աշակերտների առաջ նստած կամ կանգնած է վարժապետը։ Վարժապետը սովորեցնում է։ Աշակերտները սովորում են։ Երբոր վարժապետը ներս է մտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են. յետոյ նրանք նստում՝ դասով են պարապում։ Աշակերտները դասատանը կարդում են, գրում են, հաշւում են թուերով, երբեմն էլ նկարում են։ Աշակերտների դիմացը դրած է մի մեծ գրատախտակ։ Գրատախտակի մօտ դրած է կաւիճ և սպունգ։ Գրասեղանների վրայ դրած են դասական առարկաներ՝ գիրք, տետրակ, քարետախտակ...։ Քարետախտակի վրայ գրում են քարեգրչով։

ՋՈԿ-ՋՈԿ ԵՒ ՄԻԱՍԻՆ

Վարդանիկն ու Սաթինիկը իրար հետ խաղում էին։ Վարդանիկն իր հոլն էր պտտացնում։ Սաթինիկը տիկնով էր խաղում։ Վարդանիկը բարկացաւ Սաթինիկի վրայ։ «Իմ հոլին մի մօտենար, ինձ հետ խաղ մի անիր», ասաց։—Դու էլ իմ տիկնին մի ձեռք տար, պատասխանեց Սաթինիկը նեղացած։

Մանուկները յոնքերը կախեցին։ Նրանք հեռացան իրարից և սկսեցին ջոկ-ջոկ խաղ անել։ Բայց մենակ սկսած խաղն էլ երկար չըքաշեց և մեր մանուկները շուտով վէր գցեցին իրանց խաղալիքները։

Մանուկները իրանց խաղը ինչի՞ չ՚շարունակեցին։

2. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Ուտելիք՝ հաց, գաթայ, բաղարջ, արգանակ, սպաս, փլաւ, խորոված, տապակած, մածուն, կարագ, իւղ, սեր, կարկանդակ . . .

Խմելիք՝ ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր, կաթ . . .

ԲԵՐԱՆԱՑԻ ԵՒ ԳՐԱՒՈՐ

Հացն ուտելիք է։ Ջուրը խմելիք է։ Գրիչը. գնդակը. գաթան. կաթը. մատիտը. մածունը. սուրճը. սերը. քարեզրիչը. հոլը. զրչահատը. փլաւը. գինին. խորոված. գարեջուրը. արգանակը. պաքսիմատը. պտուտակը . . .

Առածներ։—Հացն ուտելով, բանն անելով։—Աղ ու հաց, սիրտը բաց։—Հաց ու պանիր, կեր ու բանիր։—Կուշտը սոված ին մանր կը բրդի։—Մի բաժակ ջուր, ով ուզի տուր։

Հանելուկներ։—1. Ձերմակ տակառիկ, մէջն երկու կերպ ըմպելիք։—Օրան օրան շուռ է գալիս, ոտներ չունի, ման է գալիս, բերան չունի, կուլ է տալիս։



ԱՔԱՂԱՂ

Դու ինձ ասա՛, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ,
Ինչի՞ ես շուտ արթնանում,
Բարձր բարձր երգ ասում,
Քաղցը քունս խանգարում։

ՀԱՑ ԵՒ ՋՈՒՐ

I.

Մարդուս գլխաւոր ուտելիքը հացն է։ Հացը պատրաստում են ալիւրից։ Առաջ ալիւրը մաղում են, յետոյ տաք ջրով շաղախում, խմոր են շինում. խմորը շաղախելիս՝ հետը թրթ-խմոր են խառնում։ Թրթ-խմորին ասում են խաշ։ Շաղախած խմորը լաւ հունցում են և ծածկում։ Հունցած խմորը քիչ-քիչ քացախում է տաշտի մէջ—գալիս է։ Տանտիկինը վերցնում է եկած խմորը, գնդում է և այդ գնդերից հաց է թխում թոնդրի կամ հնոցի մէջ։ Հնոցին փուռն են ասում։

II.

Ջուրը մարդիկ չեն պատրաստում։ Նա այնքան հարկաւոր է, որ Աստուած ինքը առատութեամբ բաշխում է հարուստին էլ, աղքատին էլ։ Մարդիկ խմելու ջուրը վեր են առնում աղբիւրներից ու գետերից։ Ուր որ աղբիւր կամ գետ չկայ, մարդիկ գետինը խոր քանդում են, ջրհոր են շինում և այդ ջրհորի ջուրն են խմում։ Առանց ջրի մարդս չի կարող ապրել. կենդանիներն էլ կը կոտորուին, եթէ ջուր չը լինի։

ԱՂՕԹՔ

Հայր մեր, որ երկնքումն ես, սուրբ լինի Քո անունը. գայ Քո թագաւորութիւնը. լինի Քո կամքը երկրի վրայ, ինչպէս երկնքումն է. մեր ամենօրեայ հացը այսօր էլ տուր մեզ. ներիր մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ներում ենք մեր պարտապաններին. մեզ փորձանքի մի տանիր, այլ ազատիր մեզ չարից, որովհետև Քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը այժմ և յաւիտեան։

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՎԱՐՈՒՆԳԸ

Գիւղացին գնաց պարտէզ՝ վարունգ դողանալու։ Սողալով մօտեցաւ մարգերին և մտածում էր. «Այժմ կը քաղեմ մի տոպրակ վարունգ և կը տանեմ, կը ծախեմ. այն փողերով մի հաւ կառնեմ։ Հաւը ձու կ'ածէ, թուխս կը նստի, ձագեր կը հանէ։ Ձագերը կը մեծացնեմ, կը ծախեմ և մի խոզ կ'առնեմ։ Խոզը տարէնը երկու երեք անգամ կը ծնի, կը բազմանայ։ Խոզի ձագերը կը ծախեմ և մի մատակ ձի կ'առնեմ։ Ձին քուռակ կը բերէ։ Քուռակը կը մեծացնեմ,

լաւ գնով կը ծախեմ, մի տուն կ'առնեմ և առջևը պարտէզ կը շինեմ. վարունգ կը ցանեմ և պահապաններ կը կարգեմ, որ գող չը մտնէ և վարունգները չ'գողանայ։ Ես էլ ծածուկ կը գամ և կը կանչեմ. «Է՛յ պահապաններ, այդիս լաւ պահպանեցէք»։ Գիւղացին մոռացմամբ այնպէս գոռաց, որ պարտիզպանները արթնացան, վրայ թափուեցան և լաւ ծեծեցին նրան։









3. ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆԱՒԵՐ, ԿԱՌՔԵՐ

Շինութիւններ՝ եկեղեցի, ուսումնարան, տուն, պալատ, խրճիթ, գոմ, ախոռ, կալ, մարագ, ջրաղաց . . .

Նաւեր՝ մակոյկ, նաւակ, շոգենաւ, առագաստանաւ . . .

Կառքեր՝ սայլ, սայլակ, սահնակ, կառք, շոգեկառք, հանրակառք։

Տունը շինութիւն է։ Մակոյկը նաւ է։ Տետրակը դասական առարկայ է։ Փլաւը. սահնակը. գրշահատը. եկեղեցին. շոգենաւը. ամբարը. թէյը. խորոված. առագաստանաւը. գոմը. ջրաղացը. սայլը. գրատախտակը. հանրակառքը. քարետախտակը. պալատը. սուրճը. խրճիթը...

Առածներ.—Մինչև սայլը շուռ չի անցնիլ, ճանպէն չի դրստուիլ։ —Իմացողին մին, չիմացողին հազար։—Մէկ ասա, հինգ լսէ. հինգ չափէ, մէկ կարէ։

Հանելուկներ։—1. Անջուր ջաղաց, անկրակ բաղարջ։— Չորս եղբայր կան, միմեանց յետեւից վազում են, բայց իրար չեն հասնում։

ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վազիր այդչափ արագ,
Իմ սիրունիկ նապաստակ.
Շատ պստիկ ես տակաւին,
Թաթիկներդ կը յոգնին։
Քեզ կը բերեմ կաթն ու հաց,
Ճաքրեջրով համեմած,
Ուտես, խմես, զօրանաս,
Բանից կարօտ չը մընաս։
Ծանր-ծանր կը քայլես,
Սիրտս վեր վեր կը հանես,
Կարձակեմ քեզ, երբ ուզես,
Կ'երթաս, ազատ կ'արածես։

ՏՈՒՆ

Մեր տունը մեծ չէ, նա երեք սենեակ ունի և մի խոհանոց։ Սենեակներից մէկում ես ու եղբայրս սովորում ենք մեր դասերը։ Երկրորդ սենեակում մենք ճաշում ենք. նրա մէջ դարսած են շատ աթոռներ, մի մեծ սեղան և մի պահարան։ Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք. դա կոչւում է ննջարան։

Մեր տան բակը շատ մեծ է։ Բակի աջ կողմը մի փոքրիկ պարտէզ կայ, իսկ ձախ կողմը շինած է գոմը։ Բակումն է լինում մեր տան հաւատարիմ պահապանը—շունը։

ԽՆԴԻՐ ԱՌԱԿԱՋԵԻ

Գիւղացին սայլով խոտ էր տանում. սայլի մէջ կային նաև մի գայլ և մի գառը։ Նա հասաւ գետի եզերքը և երբ ուզում էր կամրջից անց կենալ, պահապանն առաջն եկաւ և ասաց. «Եթէ ուզում ես, որ թող տամ առանց վարձի կամրջից անցկենաս, մի պայման կայ, որ պէտք է կատարես. պէտք է ապրանքդ ջոկ-ջոկ անցկացնես՝ գայլը, գառը և խոտը, բայց այնպէս, որ իրարու վնաս չ'հասցնեն։

Ի՞նչ անէր գիւղացին. եթէ առաջ գայլը տանէր, գառը կ'ուտէր խոտը,—եթէ խոտը տանէր, գայլը կը պատառոտէր գառնուկը։ Մտածեց-մտածեց մեր գիւղացին և իւր ապրանքն այնպիսի հնարքով անցկացրեց, որ մէկը միւսին ամենևին վնաս չտուեց։

Հիմա իմացէք, թէ գիւղացին իւր ապրանքն ինչպէս անցկացրեց։



4. ԳՈՐԾԻՔ ԵՒ ՍԱՐՔ

Գ ո ր ծ ի ք՝ դանակ, գդալ, պատառաքաղ, ասեղ, քորոց, մկրատ, կացին, մուրճ, սղոց, արօր, գութան, ցաքան, գերանդի, մանգաղ, թի, բահ, թուր, դուր, ուրագ . . .

Ս ա ր ք՝ սանձ, թամբ, փորքաշ, սապանդակ, կապ*, կրծկալ, թիկնափոկ:**

Դանակը գործիք է: Սանձը սարք է: Սայլը կառք է: Արօրը. կաթը. թամբը. մանգաղը. սպասը. փորքաշը. բահը. ուրագը. կրծկալը. մկրատը. եկեղեցին. պատառաքաղը. գիրքը. սղոցը. հոլը . . .

Առածներ:—Բզի գլխին բռունցքով տալ չի լինիլ:—Ուրագն իր կոթը չի տաշիլ:

Հանելուկներ:—1. Տապանը փայտ է, մեռելն երկաթ է, երբոր ձայն կըտայ, աշխարհ կըթնդայ:—Փտած փայտը փորեցին, առիւծը մէջը թաղեցին:

*) Նոխտայ: **) Ձիու լուծը, վզնոցը:

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

«Փառք ստեղծողիս, որ քեզն անուշիկ
Տուաւ իմ աչքիս, արթնացրեց հիմիկ.
Ծագեց իմ վերայ սիրունիկ արև.
Մայրիկս տուաւ ինձ քաղցրիկ բարև.
Հայրս համբուրեց, առաւ ինձ գիրկը,
Ինչպէս հովիւը—փոքրիկ գառնուկը»:
«Աստուած իմ և Տէր, մինչև այս կէտիս
Դու ես պատրաստել իմ ամեն բարիս.
Տուր որ անմեղիկ մնամ մշտական,
Ճատին սիրելի, քեզ հաճոյական»:

Մ Ե Ր Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: Ես երկու քոյր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողքս նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ կերակրում են. նրանք մեզ ուտելիք ու հագնելիք են տալիս. նրանք մեզ պահում, պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և նրանց համար աղօթք ենք անում:

Վ Ա Խ Կ Ո Տ Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ը

Յովհաննէսի մայրը տաշտի մէջ խաշ հունցեց և դրեց վառարանի մօտ, որ քացախի, իսկ ինքը դրացու տունը գնաց:

Յովհաննէսը մթնով տուն վերադարձաւ, կանչեց, ձայն տուաւ,—մարդ չ'կար: Յետոյ նա ուզեց կրակ վառել, բայց երբ վառարանին մօտեցաւ, պճպճալու ձայն լսեց. «Երևի թէ քաջք է» մտածեց Յովհաննէսը և վախից սկսեց փախ-

չիլ։ Դիպուածով կրակախառնին ոտովն ընկաւ և նրա ծայրը ճակատին դիպաւ։ «Վա՜յ, մա՜յրիկ, վա՜յ, օգնութեան հասէ՛ք», գոռաց Յովհաննէսը և ուզում էր տանից դուրս փախչիլ. բայց դուրս վազելու ժամանակ տրեխի ծուպը դրան տակը մնաց և Յովհաննէսը փռուեցաւ հէմքի վրայ ու ողբալի ձայնով գոռում էր. «Վա՜յ, մա՜յրիկ, վա՜յ, օգնեցէ՛ք, ազատեցէ՛ք, քաջքերը բռնել են ինձ»։

Այս գոռում-գոչումը լսեցին դրացիքը, եկան, վերցրին կիսակենդան Յովհաննէսին, բայց երբ գործի էութիւնն իմացան, սկսեցին նրա վրայ ծիծաղել։ Յետոյ շատ ժամանակ անցաւ և դեռ ամենքը Յովհաննէսին բարկացնում էին ու ասում, թէ ինչպէս նա չ'ամաչեց ու տաշտի խմորից, անկիւնում դրուած կրակախառնիից և իւր տրեխի ծուպից վախեցաւ։



5. ԿԱՐԱՍԻՔ ԵՒ ԱՄԱՆՆԵՐ

Կարասի՛ք՝ սեղան, աթոռ, բազկաթոռ, գահաւորակ, բազմոց, մահճակալ, օրօրոց, պահարան, գզրոց, նստարան։

Ամանները՝ գաւաթ, ափսէ, բաժակ, կուժ, հեշտաեռ, կաթսայ, շիշ, սրուակ, պնակ . . .

Սեղանը կարասիք է։ Գաւաթն ման է։ Ափսէն. բազկաթոռը. գահաւորակը. սրուակը. բաժակը. արօրը. կաթսան. տունը. սայլը. օրօրոցը. շիշը. գզրոցը. արգանակը. գնդակը. թաւան. նստարանը. գինին. տետրակը. գրչահատը. դանակը. շոգենաւը. շոգեկառքը. հեշտաեռը. թէյը. գաթան. պանիրը. բազմոցը . . .

Առածներ.—Ա՜յ կուժ, քեզ ասեմ, ա՛յ կուլայ, դու իմացիր։—Մի բաժակ ջուր, ով ուզի տուր։—Կուժը ջրի ճանապարհին կըկոտրի։—Աւելորդ կահ կարասի՝ պատճառ է շատ վնասի։

Հանելուկներ։—1. Չորս եղբայր մէկ գտակի տակ, կարծում եմ որ չ'գտաք։—2. Վերեւից երդիկ, ներքեւից դռնակ, մէջտեղումը ջուր ու կրակ։

ԱԹՈՌ ԵՒ ԳԱՒԱԹ

Աթոռը շինում են փայտից։ Աթոռն ունի չորս ոտը, նստելատեղ և մի թիկունք։ Նստելատեղը հիւսած է ծղոտից. նա տախտակից կամ փափուկ կտորից էլ է լինում։ Աթոռ շինողին ատաղձագործ են ասում։

Գաւաթը շինում են կաւից։ Կաւը բարակ մաղում են, շաղախում, հունցում և ուզած ձևը տալիս։ Շաղախը ցամաքում է արևի տակ։ Ցամաքած գաւաթները դնում են հնոցի մէջ և սաստիկ կրակ են վառում տակը։ Ցաքութիւնից կաւը կարծրանում է։ Գաւաթ շինողին բրուտ են ասում։

ԱՐԵՒ

«Արև-արև, դուրս արի,
Քեզ բերել ենք աչքալոյս.
Քո քուրիկը՝ լուսինկան,
Բերաւ չամիչ մէկ ման.

Ամպը եկաւ—մութ արաւ,
Ձամիչն աչքերէս կորաւ։
Բաց երեսըդ, արեգակ,
Մէկ բուռ չամիչ քեզ կրտանք»։
—Օ՜խ, արևին խաբեցինք.
Ամպի տակից հանեցինք։

ՄԵՂՈՒ ԵՒ ՃԱՆՃ

Ճանճերը գոհ չէին իրանց կացած տեղից. նրանք խորհուրդ արին, որ ուրիշ երկիր գնան։ Բայց մենակ չէին ուզում գնալ. իրանցից մէկին ուղարկեցին մեղուի մօտ, որ նա էլ գայ։

«Մեղու եղբայր, ասաց ճանճը, չար մարդիկ դադար չեն տալիս մեզ այստեղ. հերիք չէ, որ ամեն բան ծածկում են մեզանից, լուսամուտներումն էլ թոյն են դնում, որ ուտենք ու մեռնենք։ Խրճիթներում մեզ չեն նեղացնում մարդիկ, բայց այնտեղ էլ ուրիշ թշնամի ունինք՝ սարդերը ձգում են իրանց ոստայնները, մեր ոտները մճրճում են, մեզ խեղդում, մեր արիւնը ծծում։ Արի, մեղու եղբայր, գնանք, հեռանանք այստեղից»։

Մեղուն լսեց և պատասխանեց. «Դուք գնացէք, ուր որ կամենում էք, ես ձեր ընկերը չեմ. ինձ համար այստեղ էլ շատ լաւ է. ամենքը պատւում են ինձ ու սիրում. ես էլ ամենքին օգուտ եմ տալիս. իմ մեղրը թէ չար և թէ բարի մարդի, թէ հարուստի և թէ աղքատի ճաշակը քաղցրացնում է. իմ տուած մոմը Աստուծու տաճարն է լուսաւորում։ Դուք գնացէք, ուր որ կամենում էք. միայն գիտենաք, որ ամեն տեղ էլ ձեզ կը հալածեն, որովհետև ոչ ոքի օգուտ չէք տալիս. բացի օգուտ չտալը, ձանձրացնում էլ էք»։

ՄԵՂՈՒՆ ԵՒ ՃԱՆՃԸ

Մեղուն

Գարուն, ամառ, ամեն օր
Ես գնում եմ դաշտ ու ձոր,
Աշխատում եմ ես անվերջ,
Մեղը պտրում ծաղկանց մէջ,
Եւ գտածս ես չիտակ
Իսկոյն տանում եմ փեթակ,
Որ երբ փչէ ցուրտ քամին,
Ծաղիկները թառամին,
Ես ձմեռը պաշարով
Լինիմ խսպառ ապահով։

Ճանճը

Փոքրիկ ճանճ եմ զուարճասէր,
Միշտ թռչում եմ վայր ու վեր,
Մի հով տան մէջ, մի բակում,
Սաստիկ արևի տաքում.

Կերուխումից, խաղից ջոկ
Իսկի չունիմ ուրիշ հոգ,
Եւ ներկայով բաւական,
Միտք չեմ բերում ապագան։

6. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Զորքոտանի կենդանիներ՝ ձի, կով, ոչխար, գայլ, արջ, կատու, շուն, փիղ, առիւծ...

Թռչուններ՝ ծիծեռնակ, սոխակ, հաւ, բադ, սագ, հնդուհաւ, արծիւ, ցին, բու . . .

Ձկներ՝ կարմրախայտ, իշխան, կողակ, գեղարքունի, տառեխ, օրագուլ, կապուտ . . .

Սողուններ՝ օձ, մողէս, գորտ, կրիայ...

Միջատներ՝ մեղու, ճանճ, մոծակ, մրջիւն, մորեխ, բզեզ, կարիճ, թիթեռ . . .







Ձին ընտանի կենդանի է, իսկ ձօը։ Մողէսը սողուն է, իսկ մեղուն։ Նապաստակը. ճնճղուկը. մորեխը. ոզնին. գետարքունին. կովը. էշը. թիթեռնիկը. օրագուլը. արտուտը. մրջիւնը. կրիան։ Ի՞նչ բան են գրատախտակը եւ գրասեղանը. հոլը եւ սուրճը. պանիրը եւ մահճակալը։

Առածներ։—Ջան հետ ընկերացիր, փայտը ձեռքիցդ մի գցիր։ —Գայլի անունն է կոտրած, աղուէսն աշխարհ քանդեց։—Աղուէսի դունչը խաղողին չը հասաւ, ասեց՝ խակ է։

Հանելուկներ։—1. Քարը քարի վրայ՝ քար չէ, արածում է՝ տաւար չէ, ծու է ածում՝ հաւ չէ։—2. Մէկ շէնք ունիմ քարձր ու շարժուն, ներքեւն ունի չորս հատ հաստ սիւն, մի դուռ փոքրիկ, նեղ, գալարուն, վրան շքեղ մի վերնատուն։

ԵՐԿՈՒ ԱՔԱՂԱՂ

Երկու աքաղաղ կռուեցին և մինը յաղթեց միւսին։ Նա՝ որ յաղթուեցաւ, փախաւ, սրահի տակը մտաւ. իսկ նա՝ որ յաղթեց, բարձրացաւ կտուրը և հպարտ-հպարտ «ծուղրուղու» կանչեց։ Այդ րոպէին արծիւը թռչում էր վերևից. նա տեսաւ հպարտացող աքաղաղին, յափշտակեց նրան ու տարաւ, անուշ արաւ։

ՊԱՌԱԻՆ ՈՒ ԱՅԾԸ

(*Մանկական երգ*)

Կար-չկար երբեմն
Աղքատ մի պառիկ.
Ունէր մեր պառաւը
Կաթնատու այծիկ,
Ձալիկ-մալիկ
Կաթնատու այծիկ։
Պառաւը ձմեռը
Այծիկը պահեց,
Իր բերնի պատառը
Նրբա հետ կիսեց,
Սիրով, յօժար
Նրբա հետ կիսեց։

Երբ ձիւնը հալուեցաւ,
Բրսաւ կանաչ խոտ,
Պառաւը այծիկը
Դուրս տարաւ արօտ,
Ուրախ-զուարթ
Դուրս տարաւ արօտ։
Յանկարծ փրչեց քամին,
Մրթնեց երկինքը,
Թանձր մառախուղը
Պատեց գետինքը,
Վայ-վայ, վույ-վույ,
Պատեց գետինքը։

Պառաւը խիստ տխրեց.
Գայլն ուրախացաւ,
Այծի անուշ մսով
Փորին դեղ արաւ,
Կերաւ-լափեց,
Փորին դեղ արաւ։

Պառաւը կանգնած էր
Փունջ խոտը ձեռին,
Անմխիթար ձայնով
Կանչում էր այծին՝
«Եկ—եկ, եկ—եկ»,
Կանչում էր այծին։

ՕՁԸ

Ձմեռն էր։ Գիւղացին անտառ գնաց փայտ կտրելու։ Փայտ կտրելիս՝ նա տեսաւ մի օձ, որ ցրտից սառել, փետացել էր։ Բարի գիւղացին խղճաց օձին, վերցրեց, դրեց կրակի մօտ, որ տաքանայ։ Օձը տաքացաւ թէ չէ՝ վրայ վազեց, որ կծէ գիւղացուն։

«Ո՛վ ապերախտ, ասաց մարդը, իմ լաւութիւնը դրանով ես վճարում»։ Այս ասաց ու կացնի քիւփով խփեց, գլուխը ջախջախեց։

7. ԲՈՑՍԵՐ

Ծառեր՝ հացի, կաղնի, լորենի, խնձորի-խնձորենի, տանձի-տանձենի, ընկուզենի, թզենի, թթենի . . .

Թփեր՝ մորենի, վարդենի, մոշի, մասրի...

Բանջարեղէն՝ սխտոր, լոբի, սոխ, բողկ...

Հացաբոյսեր՝ ցորեն, գարի, վարսակ, կորեկ, հաճար, բրինձ . . .

Խոտեր՝ անանուխ, ռեհան, եղինջ, թրթնջուկ, աւելուկ . . .

Ծաղիկներ՝ մանուշակ, շուշան, յասմիկ, նարգէս, շահոքրամ, քրքում . . .

Սունկեր՝ կարմրասոկոն, ոչխարասոկոն, գայլասոկոն, անտառասոկոն . . .

Խնձորենին ծառ է, իսկ վարդենին թուփ է։ Անանուխը խոտ է, իսկ սիսեռը. ցորենը. կարտոփիլը. կաղնին. մորենին. լոքին. գարին. ընկուզենին. ճակնդեղը. սամիթը. քրինձը. կաղամբը. կեռասը. կորեկը. վարունգը. կարմրասոկոնը. սիսեռը. մանուշակը. մասրին. շահոքրամը. ռեհանը. վարսակը. թրթընջուկը. քրքումը. հաճարը. բողկը. աւելուկը. շուշանը . . .

Առածներ։—Ծառն արմատից կըչորանայ։—Պտղատու ծառը գլուխը կախ կըպահի։—Մի ծաղկով գարունք չիլինիլ։—Բարի ծառը բարի պտուղ կը բերի, չար ծառը չար պտուղ կըտայ։—Ամեն ծառ իր պտղից կըճանաչուի։

Հանելուկներ։—1. Է նա կանաչ կոճակ կոլոր, մաքուր հիւթով լցուած տկճոր, կարմիր մեղուք ներսը բոլոր, եղբայր, դու կեր իբր մեղրի ծոր։—2. Ռոնեմ ափովս, շաղ տամ թաթովս, մեռնի տարով, ապրի քարով։—3. Ոսկէ կճուճիկ, միջուկն անուշիկ։

ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկս փոքրիկ է՝ ցած,
Արօտներում միշտ թաղկացած,
Բայց իմ փունջս ամենի տան՝
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ։
Ես եմ սիրուն գարնան դուշակ.
Իմ անունս է մանուշակ։

ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ՃԱԳԱՐԸ

Աղուէսը վայրենի կենդանի է. նա միս է ուտում։ Ճագարն էլ վայրենի կենդանի է, բայց խոտ է ուտում։ Ճագարը գետնի տակը խոր ծակում է, իրան համար որջ է շինում. բայց որջը փոքր է լինում ու նեղ, որովհետև ինքն էլ փոքր է։

Աղուէսը ճագարին թշնամի է։

Մի անգամ աղուէսը մօտենում է ճագարի որջին և ասում է. «Ճագար, ինչի՞ ես խոր փոսի մէջ մտել. դուրս արի այդ մութը ծակից, արածիր պայծառ արևի տակ»։

«Ընորհակալ եմ, պատասխանում է ճագարը. երբոր այդտեղից կըհեռանաս, խրատդ կըլսեմ ու դուրս կըգամ։ Բայց քանի որ այդտեղ ես, հանգիստ կընստեմ ընիս մէջ. քեզպէսների բարեկամութիւնից ես միշտ փախչում եմ։

ԱՆՁՐԵՒ

Անձրև-անձրև, ցած արի,
Բըսցուր ցորեն ու գարի,
Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Ալէ՛ փոշի, մաքրէ՛ օդ։
Անձրև, անձրև, ցած արի,
Գալդ ամենուս բարի։

ՑՈՐԵՆ ԵՒ ԳԱՐԻ

Գիւղացին երկու օրավար հող ունէր։ Մի օրավարում նա ցորեն ցանեց, միւսում գարի։ Արտերն աճեցին, բարձրացան, հասկեր գցեցին։ Մի օր գարին սկսեց խօսել. «Ցորեն եղբայր, ասաց նա, վատ տեղ է ցանել մեզ մեր տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է՝ ոչ ոսկի ունի, ոչ արծաթ, ոչ

պէտք է մեր յարգը ճանաչէ, մեզ գին տայ։ Արի՛, ցորեն եղբայր, թողենք ու հեռանանք այս գիւղից. արի՛ գնանք այնտեղ, ուր ոսկի՛ շատ կայ»։

Ցորենը լսեց գրացու խօսքերը և ասաց. «Շատ ափսոսում եմ, գարի՛ եղբայր, որ միայն քիստրդ ես երկարացրել, իսկ խելքդ կարճ է մնացել. ինչի՞ մենք ման գանք ոսկու յետևից. մեր արժէքն այնքան մեծ է, որ ոսկին ինքն իրան մեր դուռը կըգայ»։

8. ՀԱՆՔԵՐ

Թանկագին մետալներ՝ ոսկի, պլատին, արծաթ։

Հասարակ մետալներ՝ երկաթ, պղինձ, արճիճ, կլեկ . . .

Թանկագին քարեր՝ անդամանդ, զմրուխտ, յակինթ . . .

Հասարակ քարեր՝ աղաքար, որձաքար, չէչաքար, աւազաքար, կայծաքար, կրաքար . . .

Հողեր՝ սեւահող, աւազահող, կաւ, կիր . . .

Ի՞նչ է անում վարժապետը. աշակերտը. քահանան. հողագործը. վաճառականը. հովիւը. որսորդը. ձկնորսը. ըրուտը. քարտաշը. կօշկակարը. ծին. կովը. մեղուն. շունը.

Ի՞նչ քան է ոսկին. երկաթը. որձաքարը. անդամանդը. կաւը. պլատինը. արճիճը. զմրուխտը. չէչաքարը. կիրը. արծաթը. պղինձը. գամը . . .

Առածներ։—Ապրիլ կայ՝ երկաթ է, ապրիլ կայ՝ արծաթ է։—Ոսկին փոքր է, բայց գինը մեծ է։

Հանելուկներ։—1. Երկու եղբայր խիստ որոնուած, երկուսն էլ մէկ մօրից ծնուած, մեծի փոքր է պատիւն ու գին, փոքրը յարգի եւ թանկագին։—2. Կլորակ, դեղին, աշխարհի սիրելին։

ՈՍԿԻՆ ԵՒ ԵՐԿԱԹԸ

Ոսկին և երկաթը վիճում էին միմեանց հետ։

«Ես ամենից լաւ մետալն եմ, ասում էր ոսկին. ամենքը գովում են ինձ, պատիւ են տալիս, ամենքը սիրում են ինձ. մարդկանց համար ես փող էլ եմ, զարդարանք էլ. ինձանից ինչ ասես շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիք, քորոցներ . . . Էհ, էլ ինչ երկարացնեմ, առանց ինձ մարդու կեանքը կեանք չէ, այլ տանջանք է։ Եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը մենակ կը գնեմ»։

Երկաթն ասաց. «Շատ ես պարծենում, ոսկի աղայ, և իրաւունք էլ ունիս. մարդիկ քեզ շատ են երես տալիս։ Բայց մենակ դու չես աշխարհի տէրը. երբ մարդս ուզում է ապահով ապրել, նրան երկաթ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կտրում փայտը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. գազաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում։ Եթէ դու, աղայ ջան, կարող ես աշխարհ գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել»։

ԳՈՌՆ ՈՒ ՄԸՏՐԸ

—Ի՞նչ ես լալիս, գառնուկս,
«Խիստ ծեծ կերայ, մայրիկս»։
—Քեզ ո՞վ ծեծեց, արևիկ։
«Մէկ չար պառաւ, իմ մայրիկ»։
—Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ։
«Ծառի տակն էի, մայրիկ»։
—Ինչո՞վ ծեծեց, նազանի։
«Հաստ ճիպոտով, իմ նանի»։
—Ո՞ր տեղիդ զարկեց, անուշիկ»
«Ոտիկներիս քնքուշիկ»։
—Ի՞նչպէս լացիր, անմեղիկ։
«Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մայրիկ»։

9. ՄԱՐԴԸ

Մարմնի անդամները՝ գլուխ, պարանոց, բուն, ձեռներ, ոտներ։

Գլխի մասերը՝ գագաթ, ծոծրակ, քունք, ճակատ, դէմք։

Դէմքի մասերը՝ յօնքեր, աչքեր, քիթ, թշեր, բերան, կզակ։

Գլուխը մարմնի մասն է. դէմքը. աչքը. ծոծրակը. բերանը. գագաթը. ձեռները. կզակը. ոտները. ճակատը. յօնքերը. քունքը. թշերը. պարանոցը. քիթը. աչքերը։

Առածներ։—Ստուած ձեռք է տուել՝ բան չինելու համար։—Հացն ուտելով, բանն անելով։—Բանի անունը տալիս՝ գլխի ցաւը բրոնում է։—Ծոյլ մարդու ձեռները միշտ փլաւ են ուտում։—Մի ձեռը ծափ չի տալ։—Մարմնու ճրագն աչքն է։

Հանելուկներ։—1. Մէկը կանգնած խօսում է, երկուսն ականջ են դնում, իսկ երկուսը նայում են։—2. Երկու սենեակ մի սիւնանի։

Հուտասելուկ։—Փոկակապ Յակոբ ապէր, թէ կարաս մի փոկ կապես, ես քեզ կասեմ՝ շնորհքդ շատ, փոկակապ Յակոբ ապէր։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Տէր Աստուած իմ, Տէր բարերար,
Դու պահպանէ ինձ այս գիշեր,
Տուր հօրս և մօրս կեանք երկար,
Հանգստութիւն ու լաւ օրեր։
Քո սուրբ հրեշտակդ մեր մօտից
Շրհեռանայ ամենեին,
Այլ պահէ միշտ փորձանքներից,
Արթնացընէ զուարթագին։

ՈՂՆԻՆ ԵՒ ԴԱՅԼԸ

Սոված գայլը մի օր թափառում էր դաշտումը և ուտելու բան էր որոնում։ Քանի օր էր՝ նա ոչինչ չէր կերել. խեղճի փորը վեց-վեց էր անում։ Այդ միջոցին նա տեսաւ մի փոքրիկ կենդանի, որ կամաց-կամաց առաջ էր գալիս։ Սա փշոտ ոզնին էր։ Գայլը մօտեցաւ նրան։ Ոզնին ոտնաձեռը հաւաքեց, կծկուեցաւ, փշերը ցից արեց։ Գայլը դժուարի բռնուեցաւ. նա մտածեց խորամանկութեամբ բանը գլուխ բերել։ «Սիրուն ոզնի, ասաց նա, այդ ինչ սիրունիկ ոտիկներ, ինչ նազանի դունչ ունիս. ափսոս

միայն, որ զգեստդ փշոտ է. ինչ կլինի, ընկերիկ, քնքուշ փորդ գոնէ չծածկես այդ անպիտան փշերով»։

Ոզնին քթի ծայրը դուրս հանեց և ասաց. «Հանգիստ թող ինձ, գայլ, գովասանքիդ կարօտ չեմ։ Շնորհակալ եմ Աստուծուց, որ մարմինս ծածկել է փշերով։ Եթէ այս փշերը չլինէին, դու ուրիշ լեզուով կըխօսէիր հետս»։

---

10. ՁԵՌՆԵՐԻ, ՈՏՆԵՐԻ ԵՒ ԲՆԻ ՄԱՍԵՐԸ

Ձեռների մասերը՝ դաստակ, արմունկ, ուս։

Ոտների մասերը՝ ազդր, սրունք, գարշապար։

Բնի մասերը՝ կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք։

Գիրքը դասական առարկայ է. ջուրը. գնդակը. սեղանը. կացինը. խորոված. կովը. նապաստակը. կատուն. թրթնջուկը. վարդենին. խնձորենին. օձը. զորտը. մոծակը. երկաթը. ծառը. քարը։

ԵՐԿՈՒ ՀՈՎԻՒ

Պետրոսն ու Կարապետը դաշտից տուն էին գալիս։ «Գիտես, Պետրոս, ասաց Կարապետը, եթէ քո ոչխարներից մէկն ինձ տաս, իմ հօտը քոնիցը երեք անգամ շատ կլինի»։

—Ոչ, պատասխանեց Պետրոսը, աւելի լաւ է՝ դու քո ոչխարներից մէկն ինձ տուր, այն ժամանակ մենք հաւասար կ'ունենանք։

ՈՒԼԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Լինում է—չի լինում մի այծ։ Այս այծն անտառում իրան համար տուն է շինում և իր զաւակների—փոքրիկ ուլերի հետ բնակւում է նրա մէջ։ Ամեն առաւօտ մայրը դուրս է գնում արածելու։ Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին։ «Որդիք, դռները փակեցէք, հանգիստ կացէք և եթէ դրսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»։ Ասում է ու գնում։ Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթնով լցնելուց յետոյ, այծը տուն է գալիս։ Տան դռները փակ են։ Նա պոզերով դուռը ծեծում է ու կանչում։

«Զալիկ-մալիկ ուլիկներ,
Զալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէք, բացէք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերը բաց են անում դուռը։ Մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին գնում է արածելու։

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը. նա մտքումը դնում է, որ խաբելով ներս մտնէ ուլերի փարախը, երբ մայրն այնտեղ չլինի։ Մի օր, երբ այծը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթով դռանը խփում է ու կանչում.

«Զալիկ-մալիկ ուլիկներ,
Զալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէք, բացէք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերը մի լաւ ականջ են դնում. նրանք հասկանում են, որ դուռը ծեծողն իրանց մայրը չէ և պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորիր, հեռացիր այդտեղից. մեր մայրը բարակ ձայն ունի ու քաղցր է մկկում. դուռն էլ

պոզերով է ծեծում»։ Ասում են ու դուռը բաց չեն անում։ Գայլը թողում՝ հեռանում է։ Փոքր ժամանակից յետոյ դալիս է մայրը. նա գովում է ուլերին, որ դուռը բաց չեն արել։—«Դուք շատ լաւ էք արել, որդիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ՝ նա ձեզ ամենքիդ էլ կ'ուտէր»։

Զ Ի Ի Ն

Զիւն է գալիս փաթիլ-փաթիլ,
Աղքատն ասեց՝ տունս է քաթիլ։ *)
Պառաւն ասեց՝ մոգիս կորաւ,
Գայլն ասեց՝ փորիս դեղ է։

11. ԱՉՔԻ, ԲԵՐԱՆԻ, ԴԱՍՏԱԿԻ ԵՒ ԳԱՐՇԱՊԱՐԻ ՄԱՍԵՐԸ

Ա չ ք ի մ ա ս ե ր ը՝ բիբ, ծիածան, սպիտակոց, կոպեր, արտեւանունք։

Բ ե ր ա ն ի մ ա ս ե ր ը՝ շրթունք, ծնօտներ, ընդերք, ատամներ, լեզու, քիմք, կատիկ, կոկորդ, շնչափող։

Դ ա ս տ ա կ ի մ ա ս ե ր ը՝ մատներ, ափ, մատնարմատներ։

Գ ա ր շ ա պ ա ր ի մ ա ս ե ր ը՝ պատուանդան, կրունկ, մատներ, ճիտք։

Աչքը դէմքի մասն է, իսկ քիթը։ Ափը ձեռքի մասն է, իսկ դէմքը։ Գարշապարը ոտի մասն է, իսկ պատուանդանը։ Դէմքը գլխի մասն է, իսկ գլուխը։ Ծիածանը

*) Քաթիլ է—քանդուած է, կործանուած է.

աչքի մասն է, իսկ աչքը. ատամները. կրունկը. ոտները. մազերը. դաստակը. ծնոտները։ Մորենին թուփ է, իսկ կաղնին։ Կուժն աման է, իսկ փլաւը։ Օձը սողուն է, իսկ մորեխը. ձին. վագրը. մածունը. արջը. բազկաթոռը...

Առածներ։—Լեզուդ չունի դիր։—Լեզուի տակին ոսկոր չը-կայ, որ սուտ ասելիս ծակի։—Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց։—Օձի կծածը կըսաղանայ, լեզուի կծածը չի սաղանալ։

Հանելուկներ.—1. Փոքրիկ պատուհան՝ շեղջով լիքը։—2. Չորս մայր կային նմանակ, ունէին հինգ-հինգ զաւակ, հինգը մէկ մօր էին որդիք, հինգը նրանց եղբօր որդիք, տասն էլ մօրեղբօր որդիք։

ԵՐԿՈՒ ԵՒ ՄԻ

Ականջդ երկու, ունիս մի բերան,
Հասկացիր դու լաւ.
Աշխարհիս վրայ կըլսես շատ բան,
Ու խօսէ սակաւ։
Աչքերդ երկու, ունիս մի բերան,
Հասկացիր դու լաւ.
Աշխարհիս վերայ կըտեսնես շատ բան,
Ու պատմէ սակաւ։
Երկու ձեռք ու մի բերան դու ունիս,
Հասկացիր ինձ լաւ.
Օրն իրուն դու շատ պիտի աշխատիս,
Եւ ուտես սակաւ։

ԾՈՅԼԸ ԵՒ ՋԱՆԱՍԷՐԸ

—Այսօր խաղամ, վաղը կը սովորեմ, ասում է ծոյլը։
—Վաղը կըխաղամ, այսօր սովորեմ, ասում է ջանասէրը։

Ծոյլ աղջիկը՝—«Բանն ինչ կ'անեմ, կեղտոտ է, բամբակը կորիզոտ է. մետաքս պիտի, որ մանեմ, մաստակ պիտի, որ ծամեմ, կտուրը տիտիկ անեմ, անցնողին մտիկ անեմ, ուտեմ, խմեմ, մթնի՝ քնեմ»։

Ծոյլ տղան՝—Ձորերս հանիր, թեք գցիր, ծածկիր ինձ ու խաչակնքիր վրաս. յետոյ ես ինքս կըքնեմ»։

ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ Է

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց, թագ կացաւ.
Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան,
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան։
Ամեն մարդ գնաց, իւր տունը հասաւ,
Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ.
Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր,
Չունի բարեկամ, ոչ քոյր, ոչ եղբայր.
Անտէր մնացած, Աստուծոյ կամքին,
Խեղճը ննջում է փողոցի միջին։



ԱՐՋԻ ԹԱԹԸ

Գիւղացիք թակարթ սարքեցին և մի արջ բռնեցին։ Արջին սպանելով չ'սպանեցին, միայն կացնով նրա թաթը կտրեցին։ Երեք ոտնանի արջն էլ կաղի տալով փախաւ գնաց։ Մի խեղճ պառաւ խնդրեց, որ արջի թաթն իրան տան. խուզեց նրա վրայի մազը և կաշին էլ մաշկեց։ Պառաւը միսը կրակին դրեց՝ եփելու, ինքն էլ նստեց կաշուի վրայ և սկսեց մանել նրա մազը։ Մանեց-մանեց մինչև կէս գիշեր։ Կէս գիշերին, մէկ էլ տեսնես, մի ձայն է լսում, մի բան լուսամուտի տակ թրմփ-թրմփացնում, չըխկ-չըխկացնում է։

Պառաւը լուսամուտից դուրս է նայում և ի՞նչ է տեսնում։—Տեսնում է՝ որ թաթը կտրած արջը կաղի տալով մօտենում է խրճթին։

Պառաւի լեղին պատռուեցաւ. նա կենում էր մեն-մենակ գիւղի մի ծայրում։ Ի՞նչ անէր, ի՞նչ չ'անէր, արջից ինչպէս ազատուէր։ Արջը քիչ էր մնացել, որ ներս մտնէր. նա արդէն տրփտրփում էր, որ դուռը գտնի, կրընկահան անի։ Էլ ուրիշ հնար չկար. պառաւը թոնդրի բերանը բաց արեց ու ինքը բարձրացաւ ամբարի գլուխը։ Արջը

գտաւ դուռը, կրընկահան արեց, ներս մտաւ խրճթիթ և սկսեց մթնումը պտուտ-պտուտ անել. մին էլ ի՞նչ՝ —թրը՞մփ —թոնդրի մէջն ընկաւ։

Պառաւը ցած եկաւ ամբարի գլխից, ծածկեց թոնդրի բերանը և գնաց, հարևաններին կանչեց։ Հարևաններն եկան և արջին սպանեցին։

12. ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Աչքով *տեսնում ենք* առարկան, ականջով *լսում ենք* նրա ձայնը, քթով նրա *հոտն ենք իմանում*, լեզուով *համը*, իսկ մատներով *շոշափում ենք* և իմանում նրա պընդութիւնը, փափկութիւնը, թանձրութիւնը, նօսրութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը, անհարթութիւնը . . .

Տեսողութեան գործարանը աչքն է. *լսողութեան* գործարանը . . . *հոտառութեան* գործարանը . . . *շոշափողութեան* գործարանը . . . *ճաշակի* գործարանը . . .

Կացնով կտրում են, իսկ *սղոցով*։ Ի՞նչ են անում *ասեղով. գրչով. արօրով. մանգաղով. սանրով. դանակով. պատառաքաղով. թրով. դրով. մուրճով. կողպէքով* . . .

Հնձում են (*ինչով*). *քանդում են. քերում են. կտրում են. սղոցում են. գրում են. երկաթը ծեծում են. սրում են. կարում են. ձեւում են, փորում են. տողում են*. . .

Առածներ։—Ականջն էնդուր չի մեծանում, որ շատ է լսում։—Անհունար մարդու լեզուն երկար կը լինի։—Ուրիշի աչքը քեզ համար լոյս չի տալ։

Հանելուկ։ Փետուրով կըցանեն, աչքով կըքաղեն, գլխով կ'ուտեն, մտքով կը մարսեն։

ԿԱՂՆ ՈՒ ԿՈՅՐԸ

Կաղն ու կոյրը պէտք է անցկենային մի սրընթաց առուակով։ Ի՞նչպէս անէին։ Կոյրը կաղին շալակեց և երկուսն էլ ապահով անցկացան։

ԱՌԱՒՕՏ

Փայլուն ճաճանչով արևելք ծածկուեցաւ.
Դետի մօտ գիւղի կրակը հանգաւ.
Դաշտի ծաղիկներ ցօղով ծածկուեցան.
Տաւար ու ոչխար արօտ դուրս եկան.
Թանձր մէգերը երկրից հեռացան.
Ամեն կենդանիք դաշտը լցուեցան.
Մարդիկ զարթեցան, գործը ձեռք առան
Արևը ելաւ, աշխարհ բերկրեցաւ։

ՈՉԽԱՐ

I. Գարնան վերջերում հովիւը խուզեց իր ոչխարները։ Դեռ ցուրտ էր և խեղճ կենդանիները դողդողում էին։

Ստուած խղճաց ոչխարների վրայ և աշխարհ ուղարկեց արևի տաք ճառագայթներն ու ջերմ քամին։ Ոչխարները տաքացան և ուրախ-ուրախ վազեցին դէպի դաշտը. իսկ աշունքադէմ նրանց բուրդը նորից դուրս եկաւ։

II. Մանուկներն ամբողջ ամառ ուրախ զուարթ խաղում էին։ Ձմեռն եկաւ և նրանք չկարողացան առաջուայ պէս շուտ-շուտ դուրս վազել։ Տխուր նստած էին լուսամուտների առաջ և նայում էին դէպի դուրս. դուրսն էլ ձիւնը քուլայ-քուլայ էր անում։ Մայրը գնեց ոչխարի բուրդ, թել մանեց և փափուկ գուլպաներ ու թաթմաններ գործեց իր որդոց համար. յետոյ նա շալ գործեց և շալից

նրանց համար շորեր կարեց։ Այնուհետև մանուկները տաք հագնուեցան, համարձակ դուրս վազեցին և ուրախ զուարթ սկսեցին ձնագնդի խաղալ։

13. ՄԱՐԴԻԿ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, ԲՈՅՍԵՐ, ՀԱՆՔԵՐ։

Մարդիկ՝ հայր, մայր, եղբայր, քոյր, հօրեղբայր, քեռի, հօրաքոյր, մօրաքոյր, ծերունի, պառաւ, մանուկ, տղայ, աղջիկ, կին, վաճառական, աղքատ . . .

Կենդանիներ՝ գազաններ, թռչուններ, ձկներ, սողուններ, միջատներ, խեցգետիններ, սարդեր . . .

Բոյսեր՝ ծառեր, թփեր, հացաբոյսեր, խոտեր, բանջարեղէններ, սունկեր, մամուռներ։

Հանքեր՝ մետալներ, քարեր, հողեր, աղեր։

Կաղնին ծառ է, իսկ մորենին թուփ է: Ձին չորքոտանի կենդանի է, իսկ ծիծեռնակը: Բահը գործիք է, իսկ բազկաթոռը: Գնդակը խաղալիք է, իսկ փլաւը: Քանոնը դասական առարկայ է, իսկ մուրճը: Բաղը թռչուն է, իսկ օձը: Կաղամբը բանջարանոցի բոյս է, իսկ ցորենը: Առոյտը խոտ է, իսկ սիսեռը: Երկաթը հանք է, իսկ բզէզը: Առիւծը վայրենի գազան է, իսկ ուղտը: Տառեխը ձուկն է, իսկ գորտը: Աղուէսը եւ խոզը. գարին եւ գինին. բաժակը եւ վէզը. սեղանը եւ գիրքը . . .

Աղքատը մարդ է. թուփը. թռչունը. գիրքը. սարդը. մանուշակը. երկաթը. եղբայրը. ծառը. մամուռը. սունկը, գազանը. թռչունը. խոտը. աղը. հայրը. օրիորդը. մետաղը. մեղուն. հողը.

Առածներ:—Ինչ չի ծնում, նա չի մեռնում:—Երկաթը տաք-տաք կրծեծեն:—Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:

Հանելուկ:—Էն ինչն է որ՝ առաւօտեան չորս ոտի վրայ է մանգալիս, ճաշին երկու, իսկ երեկոյեան՝ երեք:

Ուտասելուկ. Ծիտը ճմբան ծէրին, ծտի ճուտի ճիտը ծուռ:

Պ Ս Ա Կ Ն Ե Ր

(Պարերգ)

Մէկ սիրտ լինինք և մէկ հոգի,
Միութիւնն է զարդը կեանքի.
Ինչ խաղի մէջ որ գոհ լինինք,
Սէր-միութեան մենք պէտք ունինք:

Վարդէ պսակ.

Վարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ հեզութեան.
Թող վարդը հանդստանայ
Մեր մատաղ սրտի վերայ:

Կաղնեայ պսակ.

Կանաչ խոտը դաշտերի
Մեր սրտին է սիրելի.
Թող ճիւղը կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին:

Մանուշակէ պսակ.

Ազնիւ սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքոյշ հոտ անուշիկ:

Բոլորը միասին

Սիրուն կանաչ պսակին
Թող միանանք, բարեկամք,
Եւ յոյսերը անբաժան
Մնան մեզնից յաւիտեան:



ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵՆՔ Է

Աքաղաղն ու հաւը եղբայրացան։ Աքաղաղը գնաց այգին և խակ պտուղներ էր ուտում։ Հաւն էլ ասում էր նրան. «Մի ուտիր, եղբայր, վնաս կըտայ, մի՛ ուտիր»։ Աքաղաղն ականջ չդրեց. նա այնքան կերաւ, որ հազիւ կարողացաւ տուն հասնել։

Երբ տուն հասան, աքաղաղն սկսեց գանգատուիլ.

Վա՜յ, քոյրիկ, փորս ցաւում է», ասում էր նա։ Հաւը նրան անանուխի կաթիլներ խմացրեց, մանանեխ շաղախեց՝ փորին դրեց և ցաւն անցկացաւ։

Աքաղաղն առողջացաւ և գնաց դաշտը։ Այնտեղ թրուչկոտաց, վազվզեց և բոլորովին քրտնած՝ մօտեցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ։ Հաւը խրատում էր նրան. «Մի անիր, եղբայր, ասում էր, սպասիր, քիչ հանգստացիր, յետոյ կըխմես»։ Աքաղաղն ականջ չարեց նրան՝ սառը ջուրը խմեց, մրսեց և սկսեց դողացնել։ Մեծ դժուարութեամբ տուն հասցրին նրան։ Հաւը վազեց բժիշկ բերելու։ Բժիշկն եկաւ և նրա համար դառը դեղ դրեց։ Աքաղաղը երկար ժամանակ պառկած էր անկողնում։

Ձմեռնադէմ աքաղաղն առողջացաւ և գնաց գետի ափը խաղալու։ Գետը ծածկուած էր բարակ սառուցով։ Նա կամեցաւ սղղալ սառուցի վերայ։ Հաւն այս անգամ էլ խրատում է նրան. «Մի անիր, եղբայր, դեռ սառուցը բարակ է, կրկոտրուի և կըխեղդուիս», ասում էր։ Բայց աքաղաղը չըլսեց և սկսեց սղղալ, խաղալ։ Յանկարծ սառուցը կոտրուեցաւ և մեր անհնազանդ աքաղաղն ընկաւ ջրի մէջն ու խեղդուեցաւ։

14. ՕՐՈՒԱՑ ՄԱՍԵՐԸ, ՇԱԲԱԹՈՒԱՑ ՕՐԵՐԸ, ՏԱՐՈՒԱՑ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ։

Օրուայ մասերը՝ ցերեկ, գիշեր, առաւօտ, կէսօր, երեկոյ, կէսգիշեր։

Շաբաթուայ օրերը՝ կիւրակի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ։



Տարուայ եղանակները՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ։

Գարունը տարուայ եղանակն է. ցերեկը. կիւրակին. ամառը. երկուշաբթին. գիշերը. չորեքշաբթին. առաւօտը. երեքշաբթին. աշունը. ուրբաթը: Օրը ժամանակի չափ է. շաբաթը շաբաթուայ վերջին օրն է. ուրբաթը. հինգշաբթին. ձմեռը . . .

Առածներ:—Էսօրուայ բանը էգուց մի գցիր:—Էսօրուայ փուչը, էգուցուայ նուչը:—Վեց օր գործիր, եօթներորդ օրը հանգստացիր:

Հանելուկ:—Մի մանուկ կար զօրեղ, հրեղէն, խմեց հատցրեց ջուրը գետից. բոլոր մարդկանց արաւ նա քէֆ՝ հնձեց վերցրեց խոտը դաշտից:

ԿԻՐԱԿՆԱՄՈՒՏ

Իրիկնաժամի զանգակը տուին,
Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին.
Վաղը կիւրակի՝ Աստուծու օրն է,
Վերջացրէք գործերդ, հանգստեան ժամն է:
Լսեց գիւղացին դաշտումն այս ձայնը,
Դէպի տուն քշեց եզն ու գութանը՝
Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին
Լցուած մարդիկը աղօթում էին.
Դառը քրտինքով գնած մոմերը
Սուրբերի առաջ մեղմ վառւում էին:

Ե՞Ր Բ Է Լ Ի Ն Ո Ի Մ

Ձիւնը հալւում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում:—Այս ե՞րբ է լինում:

Ամիսներ անցան, օրեր տաքացան, ամպերը բարձրացան, անձրև թափեցին: Արտերն հասել են, հնձող են կանչում:—Այս ե՞րբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է թափւում, և մութ գիշերը չորս կողմդ բռնում:—Այս ե՞րբ է լինում:

Դաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան. ծառերից սառցէ շիթեր կախուեցան: Մարդիկ ներս մտան իրանց տները, իսկ գազանները—իրանց բները: Դուրսը սաստկութեամբ քամի է փչում և ձիւնի փոշիով աչքերդ լցնում:—Ասացէք, տեսնեմ, այս ե՞րբ է լինում:

Զ Ի Ի Ն

Երբ որ ձիւն կըգայ, ես կ'ուրախանամ,
Որ դուրս պիտ' ելնեմ, դահուկ պիտ' խաղամ...
Բայց տեղս ո՞րքան աղքատ տղայք կան,
Որ տաք հալաւէ կարօտ կըմնան:

Զ Ո Ր Ս Ց Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. Ձմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գարեգինը իր ընկերների հետ խաղում և սղղում էր հաստ սառուցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-ուրախ տուն վազեց և ասաց հօրը. «Ա՜խ, հայրիկ, ինչ պատուական եղանակ է ձմեռը, ո՞րքան ուրախութիւններ ենք անում մենք՝ ձնագնդի ենք խաղում, սղղում ենք սառուցի վրայ, սահնակներով զբօսնում ենք... Ա՜խ, ինչ կըլինէր, որ միշտ ձմեռ լինէր»: Հայրը հանեց ծոցի տետրակը և ասաց. «Գրիր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գարեգինը գրեց:

2. Ձմեռն անցկացաւ: Գարունը եկաւ: Բացուեցան ծառերի ծաղիկները, բարձրացան դաշտերի խոտերը. ամենայն տեղ ոստոստում էին հազարաւոր թիթեռներ ու բզէզներ: Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քա-

ղեց, թիթեռնիկները բռնեց և երբ երեկոյեան տուն եկաւ, ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ որքան ուրախացայ ես այսօր. ճշմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը և, եթէ ինձ մնար, ես կը ցանկանայի, որ միշտ գարուն լինէր»: Հայրը հանեց տետրակը և առաջարկեց Գարեգնին, որ իւր ցանկութիւնը գրէ: Գարեգինը գրեց:

3. Ամառնացաւ: Դաշտերի խոտը հասել էր և հնձող էր կանչում: Գարեգինն ու հայրը գնացին խոտ հնձելու: Քանի որ հայրը վէր էր տալիս անուշահոտ խոտը, Գարեգինն իրան զուարճութիւններն էր կատարում՝ ձուկն էր բռնում գետից, հատապտուղներ էր հաւաքում, հոտաւէտ խոտերի վրայ գլորւում էր: Երեկոյեան, տուն յետ դառնալիս, նա ասաւ հօրը. «Ահա այսօր ես անչափ ուրախացայ: Երանի թէ ամառը վերջ չունենար»: Գարեգնի այս ցանկութիւնն էլ գրուեցաւ տետրակի մէջ:

4. Վերջապէս եկաւ և աշունը: Այգիներում լաւ-լաւ պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սերկեւիլը, խաղողը . . . Մարդիկ դուրս էին եկել այգեկութի: Գարեգինն էլ իր ծնողների հետ գնաց այգի և քաղն սկսեցին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվզում նա մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խաղում և պտուղները բերանը գցելով՝ անուշ անում: Վերջը նա վազեց հօր մօտ և, նրա պարանոցով փաթաթուելով, ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է»: Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տուեց, որ նա գարնան, ձմեռուան և ամառուան համար էլ միևնոյն բանն է ասել:

Պատմեցէք ձեր բառերով այս պատմութիւնը. ասացէք, թէ բանի զլխաւոր կտորների կարող էք բաժանել սրան եւ ինչ է ասուած իւրաքանչիւր կտորում:

15. ԱՄԻՍՆԵՐ

Ամիսներ՝ յունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

Ձմերային ամիսներ՝ դեկտեմբեր, յունվար, փետրվար:

Ամարային ամիսներ՝ յունիս, յուլիս, օգոստոս:

Աշնանային ամիսներ՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր:

Գարնանային ամիսներ՝ մարտ, ապրիլ, մայիս:

Յունվարը ձմերային ամիս է, իսկ մայիսը... Սեպտեմբերը աշնանային ամիս է, իսկ փետրվարը... Մարտը գարնանային ամիս է, իսկ յունիսը... Յուլիսն ամարային ամիս է, իսկ հոկտեմբերը... Ապրիլը. օգոստոսը. դեկտեմբերը. նոյեմբերը . . .

Տարին քանի ամիս ունի. որն է առաջին ամիսը. որն է վերջինը: Որոնք են գարնանային ամիսները: Ասացէք ամարային ամիսները: Որն է աշնանային վերջին ամիսը . . . Որն է առաջինը, միջինը . . .

Մ Ա Յ Ի Ս

Մենք արժանացանք ուրախ մայիսին,
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.
Կապույտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ առաջ վազեցին։

Տերևատ ծառի ստուերների տակ
Թռչուններն իրանց երգերն են երգում,
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում
Պէսպէս կենդանիք ուրախ արածում։

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Ծեր Օհանը դաշտ դուրս եկաւ. նա շարժում էր թևերը և նրանցից թռչուններ էր դուրս թողում։ Օհանը շարժեց չորս անգամ և դուրս արձակեց ընդամենը տասներկու թռչուն։ Երբ թռան գնացին առաջին երեքը, ցուրտն սկսեց, զետերը սառեցան, մարդիկ մրսեցան։—Երբ թռան երկրորդ երեքը, ձիւնը հալուեցաւ, խոտը կանաչեց, զետերը բարձրացան, ծառերը ծաղկեցան։—Երբ դուրս թռան միւս երեքը, եղանակը տաքացաւ, շոգ օրերն եկան, արտերն ու պտուղները հասան։ Իսկ երբ դուրս թռան մնացած երեքը, փչեց ցուրտ քամին, սկսան անձրևներ ու մառախուղներ։—Ծերունու թռչունները հասարակ չէին. սրանցից ամէն մէկն ունէր չորս թև. ամէն մէկ թևի վրայ եօթը փետուր, իսկ փետուրների մէկ կողմը սև էր, միւսը ճերմակ։ Ամէն մէկ թռչուն, ամէն մի թևիկ և ամէն փետուր իր անունն ունէր։

Աչքը եւ քիթը դէմքի մասերն են, իսկ ազդրը եւ սրունքը։ Դաստակը եւ արմունկը ձեռքի մասերն են, իսկ կուրծքը եւ փորը։ Գլուխը եւ պարանոցը մարմնի մասերն են, իսկ սպիտակոցը եւ ծիածանը։ Բիբը եւ արտեւանունքը աչքի մասերն են, իսկ ատամներն ու լեզուն։ Մարտը եւ ապրիլը գարնանային ամիսներ են, իսկ սեպտեմբերը եւ հոկտեմբերը։ Ցունիսը եւ յուլիսը ամառային ամիսներ են, իսկ յունվարը եւ փետրվարը. Գայլը եւ արջը գազաններ են, իսկ ծառը եւ խոտը։ Սունկը եւ ծաղիկը բոյսեր են, իսկ աղը եւ երկաթը։ Սեղանը եւ պահարանը. արօրը եւ բրիչը. կաթը եւ ջուրը. գրիչը եւ մատիտը. կիւրակին եւ երկուշաբթին. գարունն ու ձմեռը...

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի Ն

Արևն իր ոյժը կորցրած՝
Ամպերի տակ ծածկուեցաւ,
Սաստիկ քամին ողջ ծառերի
Տերևները վէր ածաւ։

Շատ թռչուններ և թիթեռներ
Անյայտացան դաշտերից,
Ծառը չունի կանաչ տերև.
Նա զրկուած է իւր զարդից։

Երկնքումը ամպի քուլէքն
Անձրևներ են պատրաստում,
Անտառը իւր տերևներով՝
Առուն տխուր քշքշում։

Ինչի դաշտերի սողունները
Եւ վայրենի թռչունները
Զտասում են իրանց համար
Մի ապահով տեղ գտնել։

Մ Ե Ղ Ո Ի Ն Ե Ր

Գարունն սկսուեցաւ. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւնը. հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան կանաչ խոտի բողբոջներ. ծառերի կոկոնները բացուեցան և փոքրիկ տերևներ առաջ բերին։

Ահա մեղուն էլ ձմերային քնից զարթեց, բրդոտ թաթիկներով աչերը սրբեց, ընկերներին զարթեցրեց և միասին դուրս նայեցին լուսամուտից, որ տեսնեն, թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային սառը քամին անցել են։

Մեղուները տեսնում են, որ արեգակը փայլում է, որ ամեն տեղ տաք է և լոյս. նրանք դուրս են գալիս փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառը։

«Սիրուն ծիրանի, չունիս մի բան խեղճ մեղուներիս համար. մենք ամբողջ ձմեռ քաղցած ենք»։

—Ո՛չ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկները դեռ ևս պահուած են կոկոններիս մէջ։ Գնացէք, նշենուն հարցրէք։

Մեղուները թռան-գնացին նշենու մօտ։ «Սիրելի նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուներիս համար»։

—Վաղը եկէք, սիրելիք, պատասխանում է նրանց նշենին. այսօր ինձ վրայ ոչ մի բացուած ծաղիկ չկայ. իսկ երբ բացուին, ես մեծ ուրախութեամբ կընդունեմ ձեզ։

Թռան մեղուները կակաչի մօտ, նայեցին նրա փայլուն գլխին, բայց նա էլ ոչ հոտ ունէր և ոչ մեղր։

Մեղուները տրտում և քաղցած կամենում էին յետ

դառնալ տուն, բայց տեսան թփի տակ մի քնքուշ մուգ կապոյտ ծաղիկ։ Սա մանուշակն էր։ Նա բաց արաւ մեղուների համար իր կոկոնները, որոնք լիքն էին անուշ հոտով և քաղցը հիւթով։ Կերան, խմեցին մեղուները և ուրախ զուարթ յետ դարձան տուն։

Մ Ե Ղ Ո Ի

Հա՛, ծաղեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանուշակը,
Մեղուն թողեց իր փեթակը,
Տըզտըզալով-տըզտըզալով.
Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղը առաւ քաղցը-անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,
Պըզպըզալով-պըզպըզալով։
Անուշ մեղրը՝ մանը տղոց,
Դեղին մոմը՝ ամեն սրբոց,
Իսկ չարերին կրճ ու խայթոց,
Կրսկրծալով-կրսկրծալով։

16. Տ Օ Ն Ե Ր

Աստուածամօր Ծնունդը. Աւետումն. Քրիստոսի Ծնունդը և Մկրտութիւնը. Տեառնընդառաջ. Ծաղկազարդ կամ Քրիստոսի Գալուստը. Զատիկ կամ Սուրբ Յարութիւն. Համբարձումն. Հոգեգալուստ. Վարդավառ. Վերափոխումն Աստուածածնի. Խաչվերաց . . .

Առածներ։—Կարմիր ձուն զատկին կըսպի։—Տարին մի զատիկ, այն էլ նատակատիր։—Ագռաւի բերանով Վարդավառին ձիւն կըգայ։

Հանելուկներ։—Երեք ոտքէն մէկ մօրուսէն, կազնել կուտէ մեր հօր քիսէն։—Երկար աղիք, ծայրը ծաղիկ։

ՆՈՒՐԻՆ

(*Անձրեւաբեր*)

Նուրին-Նուրին եկել է,
Աջբա-հուրին եկել է,
Ձիլա շապիկ հագել է,
Կարմիր գոտիկ կապել է։
Եղ բերէք՝ վարսը քսենք,
Ջուր բերէք՝ գլխին ածենք.
Մեր Նուրինի փայը տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք։

ՃՕԼԻ

(*Արեւաբեր*)

Ճօլի-ճօլի, ճօլ չըկայ,
Խաւիծ անեմ, եղ չըկայ,
Ճօլին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ։
Ջուան բերէք՝ դուրս հանենք,
Թոկ բերէք կցան անենք,
Ջու բերէք՝ թաթին դնենք,
Եղ բերէք՝ վարսը քսենք։
Խոփը պատումն է ժանգոտել.
Ձեիչը տափումն է ժանգոտել.
Կանաչ դաշտերին ենք կարօտ.
Կարմիր արեւին ենք կարօտ։

ՃԱՆԱԿ

(*Ձատկական երգ*)

Ճ՜ըռ-ճ՜ըռ, ճչանակ,
Աստուծոյ դուռը բանանք,
Դուրսը ժամ ասենք,
Ներս գանք՝ պատարագ անենք.
Սև եզը մատաղ անենք,
Պոզերը չարդախ անենք,
Տակը նստենք՝ քարգահ անենք։

ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԵՐԳԸ

Ալէլուիա՜, ալէլուիա՜.
Հըրէս եկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,
Աջու ձեռին Աւետարան,
Ձախու ձեռին սաղմոսարան.
Աջով գրէր, ձախով ջընջէր,
Ձախով գրէր, աջով ջընջէր.
Բարեկամ, երեխայիդ անունն ինչ է։
Ձեր Ցոլակը թախտին նստի,
Փափուկ ձեռը ջէրը տանի,
Հինգ աբասին ջէրից հանի,
Սուրբ Սարգսին մատաղ անի։

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ

Ալէլուիա՜, ալէլուիա՜,
Ձատիկը արեւլուսով,

Զրօրհնէքը ճրագ-լուսով.
Թէ քնած էք, վեր զարթեցէք,
Թէ զարթուն էք, լա՛ւ լսեցէք.
Մարիամ եկաւ լալով-լալով,
Լալով-լալով մղկտալով,
Լուսաթաթախ մանուկ ծնեց,
Ծով ու ցամաք լուսով պատեց։
Ձեր տունը է չորեքսիւնի,
Չորս սիւներից ոՐն է սալի.
Սալը չարակամի սրտին,
Ապրի բարեկամի որդին։
Տունը չէ՛ն, տունը չէ՛ն.
Ձեր տղայոց անունն ինչ է։
—Հայկ ու Արամ է։
Դրանք նստեն մէկ սեղանի,
Գինի խմեն նախչուանի,
Ձեր թշնամուն գետը տանի,
Գայլ ագռաւը աչքը հանի,
Մէկ պոչատ հաւ, մէկ ըտիլ եղ
Տուէք՝ ալէլուիան տանի։

ԿԻՍԼԱՆՋԻ ԳԱՏՄՈՒԹԻՒՆԸ

I.

Լինում է-չի լինում մի պառաւ։ Այս պառաւն ունենում է երեք տղայ՝ երկուսն առողջ, իսկ երրորդը պակասաւոր։ Նրանք ապրում էին խեղճ-աղքատիկ։ Մի օր պառաւն ասում է որդոցը. «Սիրելի՛ որդիք, տեսնում էք՝ ինչ չքաւորութեան մէջ ենք, ինչ էք տանը նստոտել. գնացէք, աշխարհս մեծ է, մի գործ բռնեցէք, որ ձեզ համար գոնէ մի կտոր հաց ունենաք»։ Եղբայրները խորհրդի են նստում։ Ինչ անեն, ինչ չանեն։ Միջնակ եղբայրը մեծին ասաց. «Լսել ես, ապէր, ասում են, որ այս-ինչ անտառում մի վիշապ կայ, մեծ հարստութեան տէր. արի գնանք, սպանենք նրան և փողերը վեր առնենք»։ Մեծ եղբայրը համաձայնութիւն տուեր։ Փոքր եղբայրը խնդրեց, որ իրան էլ հետները տանեն։

—Դու ինչի համար ես գալիս, Կիսլանջ, գլխներիս բեռ լինելու. դու տանը կըմնաս, մօրդ կըմխիթարես, մինչև որ մենք յետ կըդանք, ասացին եղբայրները։ Յետոյ իրանց մօրը մնաս բարով ասելով՝ նրանք ճանապարհ են ընկնում։

Գնում են-գնում, շատն ու քիչն Աստուած գիտէ, հասնում են մի աղբիւրի, որի մօտից ճանապարհը երկուսի է բաժանւում. մեծ եղբայրը բռնում է մէկ ճանապարհը, միջնակը միւսը։

Գնում է-գնում մեծ եղբայրը և պատահում է մի հովուի։

—Բարի՛ աջողում.

«Աստուծու բարին»։

—Հովիւ եղբայր, եթէ այս ճանապարհը բռնած գնամ, այս-ինչ վիշապի բնակարանին չեմ հասնիլ։

«Կըհասնես, բայց Աստուած ապատէ քեզ այդ բանից. ինչ ունիս դու այն մարդակերի մօտ»։

—Լսել եմ որ մեծ հարստութեան տէր է. ուզում եմ սպանեմ և փողն ու հարստութիւնը վեր առնեմ։

Երբ այս խօսքերը լսեց բարի հովիւը, սկսեց քթի տակը փընթփընթալ.

«Ահա՛ մի մահկանացու,
Իր գլխից ձեռք վեր առած,
Դատարկ յոյսերից խաբուած,
Կամենում է զոհ լինել
Մեծ վիշապին մարդակեր»։

—Ի՞նչ ես ասում, հովիւ եղբայր, միթէ կարծում ես, որ չեմ կարող սպանել վիշապին։ Օ՜, դու ինձ չես ճանաչում։

«Այ մարդ, գիտես ինչ կայ, ասում է հովիւը. ես քեզ մի փորձ կառաջարկեմ. ես կրկթեմ իմ երկու սև այծերը, կաթնով կըլցնեմ այս կովկիթը, կըբըղեմ, առաջդ կըդնեմ, յետոյ կըհեծնեմ այծերիցս մինը և կըպտտեմ հօտի շուրջը. եթէ դու այդ միջոցին բոլոր կովկիթը դատարկած լինիս, կարող ես վիշապին յաղթել, եթէ ոչ՝ չես կարող»։ Պառաւի տղան համաձայնեցաւ։ Հովիւը կովկիթը լցրեց և ինքն սկսեց պտտել. բայց երբ եկաւ մեր ճանապարհորդի մօտ, նա կաթնաբրթոչի կէսն էլ չէր կերել։ Այն ժամանակ բարի հովիւն ասաց նորան.

«Արի, եղբայր, մի անիր,
Փորձուած հովուիս ականջ դիր,
Յետ դառ, գլուխդ ազատիր»։

Ականջ չարեց մեր ճանապարհորդը խեղճ հովուի խօսքին և առաջ գնաց։ Գնաց-գնաց և պատահեցաւ մի ուղտապանի։

—Բարի աջողում։

«Ատուծու բարին։ Օտար եղբայր, ո՞ւր ես գնում»։

—Գնում եմ այս ինչ վիշապին սպանեմ և նրա գանձը վեր առնեմ։

Ուղտապանն էլ՝ այս որ լսեց, սկսեց երգել.

«Ահա՛ մի մահկանացու,
Իր գլխից ձեռք վեր առած,
Դատարկ յոյսերից խաբուած,
Կամենում է զոհ լինել
Մեծ վիշապին մարդակեր»։

—Ի՞նչ ես երգում, ուղտապան։

«Ես այն եմ երգում, որ դու կըգնաս, ինչպէս գնացել են շատերը և էլ յետ չես դառնալ՝ վիշապը ողջ-ողջ կուլ

կըտայ քեզ։ Պէտք է գիտենաս, ա՛յ օտարական, որ նա միայն կարող է մեծ վիշապի հետ կռիւ տալ, ով որ ահա՛ այս ուղտին փչելով գետին կըգլորէ»։

Այս ասաց ուղտապանը և մի մեծ ուղտ քաշեց, մեր ճանապարհորդի առաջ կանգնացրեց։ Պառաւի տղան ուզեց ցոյց տալ իր ոյժը—փչեց, փչեց, բայց ուղտը տեղիցն էլ չ՝շարժուեցաւ, ուր մնաց թէ վէր ընկնէր։ Այն ժամանակ բարեսիրտ ուղտապանը նորից սկսեց երգել.

«Արի՛, եղբայր, մի՛ անիր,
Ուղտապանիս ականջ դիր,
Յետ դառ, գլուխդ ազատիր»։

Ծիծաղեց մեր ճանապարհորդը բարի ուղտապանի վրայ և շարունակեց ճանապարհը։ Գնաց, հասաւ վիշապի կացարանին։ Դռան ճեղքից մտիկ արեց և տեսաւ, որ վիշապը նստած է, մի ահագին կաթսայ առաջը դրած, ձեռքին էլ մի մեծ շերեփ. ճաշ էր ուտում։

Պառաւի տղան կանչեց.

«Վիշա՛պ-վիշապ, դո՛ւրս արի,
Միմեանց հետ կռիւ անենք,
Բաց ու արձակ սրահում
Զօր-զօրի տանք, կոխ բռնենք»։

Շատ ուրախացաւ վիշապը, որ մի խեղճ ադամորդի իր ոտովն եկել է իրան դուռը և, առանց տեղիցը շարժուելու, ներսից պատասխան տուեց.

«Օ՛տարական, քո ձայնից
Իմ սիրտս կըտրատւում է,
Բոլոր մարմինս երկիւղից՝
Ոտն ու ձեռս դողում է.
Աղաչում եմ, ինձ խղճա՛,
Մի՛ սպանիր շարաշար,

Մտիր, իմ բոլոր տունս,
Քեզ մատաղ է, վեր առ, տար»։

Ճանապարհորդը խաբուեցաւ և միամիտ ներս մտաւ վիշապի սենեակը։ Վիշապը բռնեց նրա վզակոթից և ներքնատան դուռը բանալով՝ ցած գլորեց։ «Գնա, երդիր այդտեղ մի առժամանակ, ասաց վիշապը. ես դեռևս մի քանի օրուայ պաշար ունիմ ուտելու»։

II.

Միւս առաւօտ վիշապը լսեց, որ մի ուրիշ մարդ էլ ծեծում է նրա դուռը և կանչում.

«Վիշապ-վիշապ, դուրս արի,
Միմեանց հետ կռիւ անենք,
Բաց ու արձակ սրահում
Զօր-զօրի տանք, կոխ բռնենք»։

«Այս ինչ բախտաւորութիւն է, մտածեց վիշապը. երբէք չի պատահել, որ մարդիկ իրանց ոտով իմ դուռը գան, իսկ հիմա մէկի տեղակ երկուսն են գալիս»։

Վիշապը ներսից պատասխանեց.

«Օտարական, քո ձայնից
Իմ սիրտս կտրատւում է,
Բոլոր մարմինս երկիւղից՝
Ոտն ու ձեռս դողում է,
Աղաչում եմ, ինձ խղճա,
Մի սպանիր չարաչար,
Մտիր, իմ բոլոր տունս,
Քեզ մատաղ է, վեր առ, տար»։

Անծանօթը հպարտ-հպարտ ներս մտաւ։ Վիշապն ուղարկեց նրան իր եղբօր մօտ։

III.

Անցնում է մի քանի ժամանակ. մեր հովուի մօտ գալիս է մի մարդ, մի զարմանալի Կիսլանջ մարդ, և հարցնում է, թէ այս ճանապարհով երկու օտարական չեն անցկացել։ Հովիւը պատասխանում է, որ երկու անցուորական, իր խրատը չլսելով, գնացին դէպի մեծ վիշապի կացարանը, որ ինչ է, նրան սպանեն և փողն ու հարստութիւնը վեր առնեն, բայց, աւելացրեց հովիւը, նրանք արդէն վիշապին զոհ կը լինին եղած։

Կէս-մէջքանի, մի-կռնանի մարդը պատասխանեց.

«Այդ անցուորականներն իմ մեծ եղբայրներն էին. այժմ ես գնում եմ, որ նրանց վրէժն առնեմ»։

Բարի հովիւը ժպտաց և երգեց.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով,
Լայն թիկունքով, հաստ վզով
Ի՞նչ շահուեցան նրրանից,
Թէ դու, Կիսլանջ, ինչ շահուիս»։

Այնուհետև հովիւը Կիսլանջին էլ առաջարկեց իր պայմանը. կթեց այծերը, կովկիթը կաթնով լցրեց, բրդեց և դրեց Կիսլանջի առաջ, իսկ ինքը հեծաւ այծերից մինը և սկսեց պտտել հօտի շուրջը։ Ուրքան զարմացաւ հովիւը, երբ վերադառնալով Կիսլանջի մօտ, տեսաւ՝ որ նա կերել-պրծել է և կովկիթն էլ լպրծուում է։

«Քսան տարի հովիւ եմ,
Շատ մարդիկ եմ ես տեսել,
Շատ մարդիկ հէնց այս փորձով
Ես ճանապարհ եմ գրցել.
Բայց այսպիսի մի զարմանք,
Ո՛չ տեսել եմ, ո՛չ լսել»։

«Գնա՛, եղբայր, համարձակ,
Ստուած քեզ հետ, կարող ես
Շար վիշապին սպանել,
Փողն ու դանձը վեր առնել»։

Առաջ գնաց մեր Կիսլանջը և պատահեցաւ ուղտապանին։

—Բարի աջողում, ուղտապան եղբայր, այս ճանապարհով երկու օտարական չե՞ն անցկացել։

—Անց են կացել, պատասխանեց ուղտապանը. ողորմելիքը գնում էին մեծ վիշապին սպանելու, բայց չէին իմանում, որ իրանց պէս հարիւրաւոր մարդիկ գնացել են և չեն վերադարձել։

Կէս-մէջքանի, մի-կռնանի մարդը պատասխանեց.

«Դրանք եղբայրներս էին. այժմ ես կըգնամ և նրանց արեան վրէժը կառնեմ»։

—Օհո՛, բացագանչեց ուղտապանը և երգեց.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով,
Լայն թիկունքով, հաստ վզով
Ի՞նչ շահուեցան նրանից,
Թէ դու, Կիսլանջ, ինչ շահուիս»։

Այնուհետև ուղտապանն էլ առաջարկեց Կիսլանջին իր պայմանը. մէկ ուղտ բերեց, կանգնացրեց Կիսլանջի մօտ և առաջարկեց, որ նրա վրայ փորձէ իր ուժը։ Կիսլանջն այնպէս փչեց, որ ուղտը հինգ դաշ յետ ու յետ գնաց ու վէր ընկաւ։

Ուղտապանը զարմացաւ և ասաց.

«Շատ տարի է ուղտապան,
Շատ մարդիկ եմ ես տեսել,
Շատ մարդիկ հէնց այս փորձով
Ես ճանապարհ եմ գըցել.
Բայց այսպիսի մի զարմանք
Ոչ տեսել եմ, ո՛չ լսել»։

Գնա՛, եղբայր, համարձակ,
Ստուած քեզ հետ, կարող ես
Շար վիշապին սպանել,
Փողն ու դանձը վեր առնել»։

Գնաց մեր Կիսլանջ բարեկամը, վիշապի տունն հասաւ, դուռը ծեծեց և կանչեց.

«Մարդակեր վիշապ,
Գազա՛ն ամեհի,
Հերիք անպատիժ
Մատնես մեզ մահի,
Հընչեց քո ժամը՝
Ժամ օրհասական,
Ես վերջ պիտ՝ դնեմ
Կեանքիդ անպիտան».

Զարմացաւ վիշապը այս յանդուգն խօսքերի վրայ, բայց ուզեց Կիսլանջին էլ խաբելով ներս կանչել։

«Ո՞վ ես դու, տէր իմ,
Մարդ ես, թէ վիշապ.
Զայնըդ է ուժգին,
Խօսքերըդ սարսափ.
Բայց ով էլ լինիս,
Պատրաստ եմ ահա՝ —
Բաւ է որ կամիս—
Դու տէր, ես ծառայ»։

Խելօք Կիսլանջը չխաբուեցաւ և նորից կանչեց.

«Խարդախ ձեռքով
Շատ մարդ ես խաբել,
Շատին ներս տարել,
Մորթել ու լափել.
Բայց էլ հերիք է,
Պէտք է որ դուրս գաս.

Գլուխը վրկայ,
Պիտ՝ լինիս մաս-մաս»։

Բարկացաւ վիշապը և կատաղած դուրս վազեց, որ յանդուգն մարդու մեծ պատառը ականջը թողի։ Վիշապը գլուխը դուրս հանեց թէ չէ, Կիսլանջի լզրանոց թուրը պսպղաց և վիշապի գլուխը երկու կէս եղաւ։ Սարի նման դազանը վէր ընկաւ, սատկեցաւ։ Կիսլանջը ներս մտաւ վիշապի բնակարանը։ Նա պտտեց բոլոր սենեակները, ամեն քունջ ու պուճախ նայեց, բայց եղբայրներին չգտաւ։ Երկիւղը պատեց բարի Կիսլանջի սիրտը՝ մի գուցէ չար դազանն արդէն լափել է նրանց։ Կիսլանջն սկսեց ձայն տալ, կանչել։ Այդ ժամանակ ոտների տակից մի խուլ հառաչանք լսեց։ Ցած նայեց և յատակի վրայ դեան պէս մի բան տեսաւ, շտապով բարձրացրեց այդ դուռը, ականջ դրեց և պարզ կերպով լսեց եղբայրների ձայնը, որոնք օգնութիւն էին կանչում։ Կիսլանջը ցած թռաւ իսկոյն և յայտնեց եղբայրներին, որ դազանին սպանել է։ Նրանք իրար փաթաթուեցան, մէկ-մէկու համբուրեցին և ճաշեցին միասին։ Ճաշելուց յետոյ բոլոր տունը պտտեցին, ման եկան, մառանի յատակի տակ մի հոր դտան. սա դազանի *խազնահորն* էր։ Կիսլանջի կռնատակերից թոկ կապեցին և ցած թողեցին հորը։ Հորի մէջ անթիւ ոսկի կար։ Կիսլանջը առաջ մեծ եղբօր պարկը լցրեց, դուրս քաշել տուեց, յետոյ երկրորդինը և յետոյ իրանը։ Երբոր ոսկով լիքը պարկերը դուրս էին հանած, Կիսլանջը կանչեց, որ թոկը ցած թողեն, մէջքիցը կապի ու իրան էլ դուրս քաշեն, կանչեց Կիսլանջը, ձայն տուեց. պատասխան չկայ, մարդ չկայ...

Կիսլանջի եղբայրները թողեցին իրանց ազատողին հորի մէջ, վեր առան ոսկով լիքը պարկերը և ճանապարհ ընկան դէպի տուն։ Բայց Կիսլանջը հորի մէջ չմեռաւ. նա ոտնատեղեր շինեց հորի պատերի վրայ և, շատ չարչարուելուց յետոյ,

դուրս եկաւ։ Ոսկով լիքը պարկը դրած էր հորի մօտ։ Կիսլանջը շալակեց պարկը և շտապեց, որ եղբայրներին հասնի։ Գնաց, տեսաւ, որ նրանք պարկել են մի ծառի տակ ու քնել։ Կամաց-կամաց մօտեցաւ, զգուշութեամբ վեր առաւ նրանց պարկերը, տարաւ, թափեց միջի ոսկին մի ապահով տեղ, մանը խճաքարով լցրեց պարկերը և բերեց իրանց առաջուայ տեղը դրեց ու ինքը թաղկացաւ։ Եղբայրները վեր կացան, վեր առան պարկերը և ճանապարհ ընկան դէպի տուն։ Կիսլանջն էլ գնում էր նրանց յետևից։ Երբոր մեր ապերախտները տուն հասան, դուռը ծեծեցին և ասացին.

«Մայրիկ-մայրիկ, դուռը բաց, վիշապին սպանեցինք,
Նրա ոսկին պարկերով շալակած այստեղ բերինք»։

Պառաւը ոսկու ձայնը որ լսեց, ուրախ-ուրախ դուրս վազեց, որդկերանցը համբուրեց, յետոյ շտապեց, մեծ տաշտը բերեց և ինչ դատարկեց—խիճ։ Եղբայրները փայտի պէս սառած մնացին։ Այդ բոլէին հերթիցը մէկը ձայն տուեց.

«Մայրիկ-մայրիկ, դուռը բաց.
Վիշապին սպանեցի,
Նրա ձեռքից ես դրանց
Ողջ ու առողջ փրկեցի.
Բայց դրանք ինձ խաբեցին՝
Ուզելով ինձ սպանել,
Հորի մէջը թողեցին։
Այլ Աստուած էր օգնական,
Ինձ այն հորից ազատեց,
Դրանց պատիժն էլ տուեց—
Պարկերը խիճով լցրեց։
Սակայն դրանց, մայր, ներիր,
Եւ տանից մի դուրս անիր»։

Մայրը գրկեց բարեսիրտ ու մեծահոգի Կիսլանջին և նրա համար ձուաձեղ արեց։

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԵՒ ԹՌՉՆԱԿԸ

«Սիրուն թռչնակ, բռնուեցար,
Ցանցից չես ազատուիլ.
Ոչինչ բանով աշխարհում
Քեզնից չենք բաժանուիլ»։

—Ա՜խ, ձեր ինչին եմ պէտք ես,
Սիրելի՛ մանուկներ.
Թողէք ինձ ազատ թռչիմ,
Բացէք ցանցիս դռներ։

«Չէ՛, չէ՛, թռչնակ, չենք թողիլ,
Դու մեզ մօտ կըմնաս.
Մենք քեզ շաքրէ հաց կըտանք,
Կուտես, կ'ուրախանաս»։

—Ա՜խ, շաքրէ հաց չեմ սիրում,
Քաղցրեղէն չեմ ուտում.
Թողէք, դաշտի մորեխներն
Շաքրից լաւ եմ հաչւում։

«Այնտեղ դաշտում ձմեռը
Դուցէ ցրտից մեռնիս,
Իսկ մեզ մօտ ոսկուց չինած
Վանդակի մէջ կապրիս»։

—Օ՜, մի վախէք՝ ձմեռը
Տաք կողմեր կըթռչեմ,
Իսկ բռնուած դրախտն էլ
Ինձ բանտ կըհամարեմ։

«Թռչնակ-թռչնակ, մենք ինչպէս
Քեզ կըփայփայէինք.
Չէինք թողնիլ, որ տխրես,
Միշտ կ'ուրախացնէինք»։

—Հաւատում եմ, բայց ձեր սէրն
Ինձ միշտ կըվնասէր,
Որովհետև այդ կերպով
Աչքս յաւիտեան կըփակուէր։

«Ճշմարիտ է, ով թռչուն,
Գերութեան չես տանիլ.
Ստուած քեզ հետ, դէ՛հ, թռիր,
Ազատ, ուրախ եղիր»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան . . . . . 4 երես

I. 1. Այբբենական մասն . . . 1—19

2. Դրչագիր այբուբենը . . . . . 4 երես

II. Բարոյակրթական առակներ և մանրիկ ոտանաւորներ . . . 20—31

III. Առարկայական դասերի և իրազննութեան նիւթը գրքի երկրորդ կիսամեակում:

1. Դասական առարկաներ և խաղալիք . . . 33
2. Ուտելիք և խմելիք 36
3. Զինուժիւններ, նաւեր, կառքեր . . . 39
4. Գործիք և սարք 42
5. Կարասիք և ամաններ 44
6. Կենդանիներ 48
7. Բոյսեր 51
8. Հանրեր 55
9. Մարդու մարմնի անդամները 57
10. Ձեռների, ոտների, բնի մասերը . . . 59
11. Աչքի, բերանի, դաստակի, դարշապարի մասերը . 61
12. Հինգ զգայարանը 65
13. Մարդիկ, կենդանիներ, բոյսեր, հանքեր . . 67
14. Ժամանակի չափերը 71
15. Ամիսներ 75
16. Տօներ 79

IV. Գրաւոր աշխատութեան համար առաջարկուած նիւթեր. երես 33, 36, 40, 42, 45, 49, 53, 56, 58, 59, 62, 65, 68, 72, 75, 77.

V. Առածներ և ասացուածներ՝ 33, 36, 40, 43, 45, 50, 53, 55, 57, 61, 65, 68, 69, 79.

VI. Հանելուկներ և շուտ-ասելուկներ՝ 34, 36, 40, 42, 45, 50, 53, 55, 58, 62, 65, 68, 72.

VII. Նկարագրական և պատմողական յօդուածներ.

1. Դասատուն 35
2. Ջոկ ջոկ և միասին 35
3. Հաց և ջուր 37
4. Աղօթք 38
5. Գիւղացին և վարունգը 41
6. Տուն 41
7. Խնդիր առակաձև 41
8. Մեր ընտանիքը 43
9. Վախկոտ Յովհաննէսը 43
10. Ամոռ և գաւաթ 45
11. Սեղու և ճանճ 46
12. Երկու աքաղաղ 50
13. Օձ 51
14. Աղուէսն ու ճագարը 54
15. Ցորեն և գարի 54
16. Ոսկին և երկաթը 56
17. Ոզնին և գայլը 58
18. Երկու հովիւ 59
19. Ուլերն ու գայլը 60
20. Ծոյլը և ջանասէրը 62
21. Արջի թաթը 64
22. Կաղն ու կոյրը 66
23. Ոչխար 66
24. Համբերութիւնը կեանք է 70
25. Երբ է լինում 72
26. Հորս ցանկութիւն 73
27. Հանելուկ 76
28. Մեղուներ 78
29. Կիսլանջի պատմութիւնը 82
30. Տէրունական աղօթք 93

VIII. Մանկական ոտանաւորներ

1. Ուսումնարան 34
2. Աքաղաղ 37
3. Նապաստակ 40
4. Առաւօտեան աղօթք 43

5. Արև 45
6. Մեղու և ճանճ 48
7. Պառաւն ու այծը 50
8. Մանուշակ 53
9. Անձրև 54
10. Գառն ու մայրը 57
11. Երեկոյեան աղօթք 58
12. Ձիւն 61
13. Երկու և մի 62
14. Որքի պահողն Աստուած է 63
15. Առաւօտ 66
16. Գոակներ 68
17. Կիրակնամուտ 72
18. Ձիւն 73
19. Մայիս 76
20. Հոկտեմբերին 77
21. Մեղու 79
22. Նուրին 80
23. Ձօղի 80
24. Ճչանակ 81
25. Ծննդեան երգ 81
26. Թռչնակ 93

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երես

«34»—I. Փետուրէ գրիչ։ II. Հոլ (բզզան)։
«36»—I. Ձու։ II. Ջուր, գետ։
«40»—I. Մեղրահաց (բմբիճ)։ II. Կառքի անիւները։
«43»—I. Հրացան։—II. Թուր, դաշոյն։
«45»—I. Սեղան։—II. Հեշտաեռ (սամավար)։
«50»—I. Կրիայ։—II. Փիղ։
«52»—I. Թուզը։—II. Հացահատիկներ։—III. Նուշ։
«55»—I. Ոսկի և արծաթ։—II. Ոսկի։
«58»—I. Բերան, ականջներ, աչեր։—II. Քիթ։
«62»—I. Բերան և ատամներ։—II. Ձեռներ, ոտներ, մատներ։
«65»—I. Կարդալ-գրել։
«68»—I. Մարդը՝ մանկական, այրական և զառամեալ հասակում։
«72»—I. Արեգակ։
«80»—I. Ճրագ և ճրագակալ։—II. Մոմ։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Մ. Ա. Մաշտոցի անվան

204
1178

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ազայեանց՝ Ուսումն Մայրենի Լեզուի, ա. տարի . 25 կ.
2. » Ուսումն Մայրենի Լեզուի, բ. տարի „ 40 կ.
3. » Ուսումն Մայրենի Լեզուի, գ. տարի . 55 կ.
4. Գէորգ-Բէգեան՝ Ծողովածու թուաբ. խնդ. Ամբ. թուեր 40 կ.
5. Մանդինեան՝ Նահապետական Աշխարհ. . 60 կ.
6. » Ընտանեկան Աշխարհ . . 25 կ.
7. » Դիւցազնական Աշխարհ . . 25 կ.
8. » Հենչէլի՝ բանաւոր և գրաւոր հաշուելու
» խնդիրներ, առաջին և երկրորդ տարի 40 կ.
9. » Բանաւոր և գրաւ. հաշու. խնդ. գ. տարի 50 կ.
10. Տէր-Ղեոնդեան՝ Մայրենի Լեզու, առաջին տարի . 35 կ.
11. » Մայրենի Լեզու, երկրորդ տարի . 40 կ.
12. » Մայրենի Լեզու, երրորդ տարի . 50 կ.
13. » Մայրենի Լեզու, չորրորդ տարի . 65 կ.
14. » Մայր. Լեզուի. բաց. ձեռ. ա. տար. սպառ.
15. » Մայր. Լեզուի քերականութ. տարերքը,
» մասն առաջին . . . . 30 կ.
16. » Մայրենի լեզուի քերականութեան
» տարերքը, մասն երկրորդ. . (սպառ.)
17. » Հայորդի՝ Սրբազան պատմ. Հին Կտակ. 50 կ.
18. » Սրբազան պատմ. Նոր Կտակարանի 50 կ.

Դիմել՝ Въ Центральную книжную торговлю,
въ Тифлисѣ.

2015
4583
<< Ազգային գրադարան
NL0062646